



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

24447

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻՍՑԵՔ

Ա. ԳՈՒՐԵՎԻՉ

== ԼԵՆԻՆԸ ==

Յ Ե Վ,

ԱՐՅԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Արհմիությունների կարգի № 9.

Յ Ե Ե Վ Ս Ն

1925

331-88  
9-99

331.88  
4-39

ՀԱՄԽ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

|     |  |                 |           |
|-----|--|-----------------|-----------|
| № № |  |                 |           |
| 1.  | Բանվորական շարժման պատմությունը Անգլիայում, ֆրանսիայում և Գերմանիայում . . . . . | Ա.Կ-Ա.Գ         | « — 75 կ. |
| 2.  | Գործարկումների և աեղկումների ուղեցույց . . . . .                                 | —               | « 1 —     |
| 3.  | Աշխատանքի որենսդիրը . . . . .  | —               | « — 15    |
| 4.  | Պրոֆեսիոնալ շարժումը Ռուսաստանում . . . . .                                      | Ա.Տոսոկին       | « — 60    |
| 5.  | Գործարկումների և աեղկումների անելիքները . . . . .                                | Սեմյուշկին      | » — 25    |
| 6.  | Սոցիալական ապահովագրությունը . . . . .   | Փաբրիկանս       | » — 20    |
| 7.  | Ակնարկներ Արևելքի բանվորական շարժման մասին (սպասված) . . . . .                   | Ելզուսի         | » — 50    |
| 8.  | Արհմիությունների խնդիրները և գործելակերպը (սպասված և) . . . . .                  | Լազովսկի        | » — 30    |
| 9.  | Հոսանքների պայքարը համաշխարհային արհեստակցական շարժման մեջ (սպասված) . . . . .   | Լազովսկի        | » — 15    |
| 10. | Սիֆիլիս . . . . .  | Բժ. Մելիֆյանի   | » — 5     |
| 11. | Մոլարիա . . . . .  | Բժ. Կարապետյանի | » — 5     |
| 12. | Յևրեյ Բնակրնայիտնալ . . . . .  | Ինսցենիրովկա    | » — 5     |
| 13. | Բանվորների և ծառայողների ապահովագրումը հաշմանդամության պայքարում . . . . .       | Բիխովսկի        | » — 20    |
| 14. | Աշխատանքի հաշմանդամների ապահովագրումը հաշմանդամության պայքարում . . . . .        | »               | » — 20    |

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ

ՌԲ  
39481

Ա. ԳՈՒՐԵՎԻՉ

== ԼԵՆԻՆԸ ==  
Յ Ե Վ,

ԱՐՋԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Արհմիությունների Խորհրդի № 9.

Յ Ե Ր Ե Վ Ա Ն  
1925

### Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Միությունների դերի յեզվ խնդիրների Լենինյան բմբրո-  
նումը Ռուսաստանի արհեստակցական շարժման յեզվ ամբողջ  
աշխարհի հեղափոխական արհշարժման տեսության յեզվ քա-  
ղաքականության հիմքն է: Իմանալ, թե ինչպես եր Լենինը  
միությունների խնդիրներն բմբրոնում յեզվ պրոլետարիատի դա-  
սակարգային կռվի մեջ նրանց դերը գնահատում—նշանակում  
է յուրացնել հեղափոխական արհշարժման հիմունքները:

Մեզ մոտ հեղափոխական, առաջին հերթին մեր արհշարժ-  
ման թեորիան, քաղաքականությունն ու պրակտիկան շարա-  
դրող գրականությունը շատ աղքատ է: Հատկապես նրա տե-  
սական հիմունքները դեռ կարոտ են մշակման: Ընթերցողի  
ուշադրությանն առաջարկված այս գրքույկը հավակնություն  
չունի այդ— դեռ ապագայի— գրականությանը վերագրվելու:  
Նրա նպատակը շատ համեստ է: Նա նպատակ ունի թեկուզ  
համառոտ, բայց, վոր գլխավորն է, ընթերցողների լայն շրջա-  
նի համար մատչելի ձևով՝ շարադրել Լենինի թեորիայի հի-  
մունքները արհշարժման մասին:

Այս գրքույկի ընթերցանության համար, ըստ հեղինակի,  
պահանջվում է միայն Մարքսի յեզվ Լենինի ուսմունքների  
տարրական հիմունքների ծանոթություն. այսինքն այնքան,  
վորքան տայիս են խմբակային պարագմունքները կամ քաղ-  
գրագիտության դպրոցները: Հեղինակը յուր նպատակին յիռ-  
վին հասած կը լինի, յեթե այս գրքույկն այդպիսի ընթերցո-  
ղին պարզորոշ գաղափար տա Լենինի միություններին վե-  
րաբեյալ ուսմունքի հիմունքների մասին կապիտալիզմի յեզվ  
պրոլետարիատի դիկտատուրայի մնցման շրջանում, հետեվաբար  
յեզվ հեղափոխական արհշարժման հիմնական սկզբունքների  
մասին:



3344 - 84

Գոարեվպար № 5 բ. Տիրած 5000. Պատվեր 3236.

Տպագրական Տրեստի 2-րդ տպարան, Յերեվան.

ԳԼՈՒԽ I

ԼԵՆԻՆԻ ՈՒՍՄՈՒՆՔԻ ԸՆԳԶԱՆՈՒՐ ՍԻԵ-  
ՄԱՆ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԼԵՆԻՆԸ—ՇԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԱՐՀՇԱՐԺՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՌՈՍ

Լենինի մեծ ուսմունքը պրոլետարիատի հեղափոխական կռիվի մասին կառուցված է այն բանի ուսումնասիրութեան վրա, թե ինչպես այդ դասակարգն աճում է, վորպես իր հատուկ պատմական խնդիրները գիտակցող դասակարգ: Բանվոր դասակարգը վոչ միանգամից, վոչ ել ամբողջութեամբ միասին է սկսում հասկանալ, վոր կադրիստալի տապալումը և սոցիալիստական տնտեսութեան կազմակերպումը նրա պատմական մեծ խնդիրն է: Տեսնել և ըմբռնել բանվորների դասակարգային կռիվի զարգացման ուղին և այդ ըմբռման վրա հիմնված ղեկավարել այն— ահա ինչն էր համարում Լենինը պրոլետարիատի առաջավոր մասի՝ նրա հեղափոխական կուսակցութեան խնդիրը: Ուստի Լենինի ուսմունքը, վորպես բաղադրիչ մաս, պետք է իր մեջ պարունակեր նաև բանվորների արհեստակցական կռիվի հարցերի հեղափոխական-մարքսիստական մշակումը: Կապիտալի և նրա պետութեան դեմ դասակարգային, հեղափոխական-բաղադրական կռիվի անհրաժեշտութեանը գիտակցող բանվորն ինչպես պետք է վերաբերվի կապիտալի դեմ իր շահերի արհեստակցական պաշտպանութեան խնդրին:

Ի՞նչ հարաբերութեան մեջ է գտնվում բանվորների այս արհեստակցական կռիվը պրոլետարիատի, վորպես դասակարգի, ընդհանուր քաղաքական կռիվի հետ:

Համաշխարհային բանվորական շարժումն է ստեղծել արհմիությունները, նա յե ստեղծել նաև պրոլետարիատի կուսակցությունները: Ի՞նչ փոխհարաբերութեան մեջ են բանվոր դասակարգի այս կազմակերպությունները, և ի՞նչն է դրանցից յուրաքանչյուրի խնդիրը:

Բավական է այս հարցը գնել, վոր մենք տեսնենք, թե դորժ ունենք համաշխարհային բանվորական շարժման հիմնական խնդիրների հետ:

Վորոնք են դասակարգային կռիվի զարգացման պայմանները, ի՞նչպես է բանվոր դասակարգն այդ կռիվի ընթացքում իրապես դառնում իր պատմական հատուկ խնդիրներն ունեցող դասակարգ: Ի՞նչ է պրոլետարիատի կուսակցությունը, ի՞նչ փոխհարաբերութեան մեջ են դասակարգն ու կուսակցությունը, բանվորների տնտեսական և քաղաքական կռիվը,— ահա այդ հարցերը:

Անարխիզմն ու մարքսիզմը համաշխարհային բանվորական շարժման այդ հիմնական հարցերի յերկու տարբեր պատասխաններն էյին: Այդ յերկու հիմնական պատասխաններին հետագայում ավելանում է յերրորդը՝ համաշխարհային բեֆորմիզմի և սոցիալ-համաձայնողականների պատասխանը:

Միութեան խնդիրների Լենինի ըմբռնման պատվանդանը Կարլ Մարքսի ուսմունքն է:

Մակայն Լենինը նախ զարգացրեց միութեան խնդիրների մարքսիստական ըմբռնումը ռեֆորմիստների դեմ կռվելիս, վորոնք գիտական սոցիալիզմի հիմնադրի մեծ ուսմունքն ազավաղում էյին:

Յերկրորդ՝ Լենինը գործադրեց Մարքսի ուսմունքն արհմիությունների, ինչպես և բանվոր դասակարգի այլ կռիվների նկատմամբ այնպիսի պայմաններում, վոր Մարքսը չէր կարող ուսումնասիրել:

Լենինի գաղափարական դնկավարութեամբ պրոլետարական դիկտատուրայի շրջանի ուսանական միութիւնները փորձը նոր եջեր գրեց համաշխարհային արհմիութեան սխառմութեան մեջ:

Այդ փորձի վրա յեւ կառուցված է Լենինի ուսմունքը միութիւնները գերի մասին՝ պրոլետարիատի դիկտատուրայի անցման շրջանում:

Այդ ուսմունքը, վորպէս ինքնուրույն գլուխ, պետք է մտնի միութիւնները խնդիրների ընդհանուր հեղափոխական-մարքսիստական ըմբռնման մեջ: Այդ գլուխը ամբողջովին է նորից Լենինն է գրել:

### ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՌՎԻ ԱՆԻՈՒՍԱՓԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպէս հայտնի յէ, Լենինի առաջին գրվածքներից է նրա մի գրքուկը, վոր նվիրված է սուգանքները հարցին: Լենինն անցյալ դարավերջի ֆարրիկաներում է գործարանաներում իշխող ալլանդակութիւնները և ճշման մերկացումները համարում էր բանվորին կապիտալի դեմ կռվի գրգելու միջոցներից մեկը: Հասկանալ, վոր աշխատանքի քիչ թէ շատ տանելի պայմաններ ձեռք բերելու կռվում իր և իր աշխատանքի ընկերոջ շահերը նույնն են, — դասակարգային դիտակցութեան զարգացման առաջին քայլն է:

Լենինը հետագայումն էլ դնահատում էր դասակարգային կռվի այդ առաջին քայլերի նշանակութիւնը:

1902-ին գրած իր «Ի՞նչ անել» գրքում Լենինն ասում է. — «Տնտեսական կռիվը բանվորների կռիւկաիվ կըռիփն է՝ բանվորական ուժը վաճառելու նպաստավոր պայմաններ ձեռք բերելու, աշխատանքի պայմանները և բանվորների կյանքը բարվոքելու համար: Այդ կռիփն անհրաժեշտաբար հանդէս է գալիս վորպէս արհեստակցական կռիվ, վերսկսեալ տարրեր արհեստներում աշխատանքի պայմանները խիստ բազմազան են, հետադարձ և այդ պայմանների բարվոքման կռիվը չի կարող ըստ արհեստի չմղվել»:

Յերկար տարիներ հետո նույն բանի մասին Լենինը Խորհուրդների III համագումարում կրկնում է (1920 թ.). — «Կապիտալիզմի ժամանակ, — ասում է Լենինը III համագումարի ճառում, — բանվորների միացումը տեղի յեր ունենում ըստ համաբարութեան և ըստ արհեստի: Դա առաջադիմական յերեւոյթ էր, այլպէս պրոլետարիատը միանալ չէր կարող: Անհեթեթութիւնն է ասել, թէ պրոլետարիատը միանգամից իբրև դասակարգ կարող էր միանալ: Այդպիսի միացում կարող էր տեղի ունենալ միայն տասնամյակների ընթացքում»:

Այսպէս էր հասկանում Լենինը բանվորների արհեստակցական կռվի անխուսափելիութիւնը:

Բանվոր դասակարգն աճում է վորպէս դասակարգ, սկսում է դիտակցել իր հատուկ դերը, իր հատուկ խնդիրները կապիտալիստական հասարակակարգում՝ միայն կապիտալի դեմ մղած կռվի ընթացքում:

Նրա միացումը տեղի յէ ունենում ամենից առաջ աշխատանքի պայմանների բարվոքման կռվի հողի վրա: Աշխատանքի շուկայում բանվորը բաղխվում է կապիտալիստի և ուրիշ բանվորների հետ, վորոնք իրենց բանվորական ուժն են վաճառում. — ավելի լավ չէ՞ բանվորների համար համաձայնութեան դալ, թէ ինչպէս համերաշխ գուրս գան կապիտալիստի դեմ:

Համաբարութեան մեջ ֆարրիկայում և գործարանում արտադրութեան պրոցեսն ինքն է բանվորներին մի խմբակցութեան մեջ ձուլում. ավելի լավ չէ՞ գործատիրոջ դեմ ուղղված գործողութիւնների մեջ համերաշխութեան դալ, բան բաժան-բաժան գուրս գալ և անպայման պարտուել:

Սրանք տարրական մտքեր են. այդ ձգտումները բնական են ամեն մի բանվորի համար, մինչև իսկ այնպիսի բանվորի համար, վորը դեռ չի լսել այն մասին, թէ բանվոր դասակարգը բոլոր աշխատավորներին կապիտալի լծից ազատելու և սոցիալիստական նոր հասարակակարգ ստեղծելու լայն խնդիրները կարող է առաջադրել իրեն: Լենինն

այսպիսի տարրական կազմակերպման հանդես զայլ զհաս-  
նատում ե վորպես «բանվոր դասակարգի հսկա առաջադի-  
մություն, կապիտալիզմի զարգացման սկզբում, վորպես  
անցումն բանվորների անշատ և անույնական դրություն-  
նից դեպի դասակարգային միացման սկզբնատվորությունը»:

Վոչ վոք Լենինի պես չի կարողացել պարզ գնահատել  
բանվոր դասակարգի իրական ուղիները, ուսումնասիրել,  
թե ինչպես այդ դասակարգն աճում և՛ զարգացման տար-  
բեր շրջաններ անցնելով: Մտածել անգամ այն մտախն, թե  
պրոլետարիատն ամբողջովին կամ նրա՝ մեծամասնություն-  
ը կապիտալիզմի պայմաններում ի վիճակի լի մշակել իր  
համար բոլորովին պարզ սոցիալիստական գիտակցություն,  
սոցիալիստական համոզմունքներ և բնավորության կուս-  
ամբություն, Լենինը համարում էր վտանգավոր խաբեյու-  
թյուն, կապիտալիզմի պաճուճանք:

Բանվոր դասակարգը կապիտալիզմի ժամանակ ապ-  
րում է այնպիսի պայմաններում, վոր նրան ճնշում  
են թե ֆիզիքապես և թե բարոյապես:

Կապիտալիստական շահագործման ճնշումը ուժերի  
միայն չնչին մնացորդն է թողնում միջին բանվորին՝  
արտագործարանային կյանքի և գործունեյության համար:  
Ամբողջ կապիտալիստական հասարակությունը՝ յուր կազ-  
մակերպությունով, յուր յեկեղեցիով, դպրոցով, մամուլով,  
իր ամբողջ քաղաքականությամբ ձգնում է միջին բանվո-  
րի հոգեկանը, ստիպում է նրան հաճախ կապիտալիստա-  
կան ախոռը ինչ վոր անխուսափելի և բնական համարել:  
Այդպիսի բանվորը հազար թեկերով կապված է կապիտա-  
լի, մանր-բուրժուական նախապաշարումների և քաղքենի-  
ական պատրանքների հետ:

Ուստի այդպիսի բանվորի համար արհեստակցականու-  
րեն կազմակերպվելը անհրաժեշտ և անխուսափելի քայլն է  
դեպի դասակարգային գիտակցության հետագա զարգա-  
ցումը: Այնուհետև նա քայլ առ քայլ կը մտահոս գիտակ-  
ցության ավելի բարձր ստիճանին: Պետք է հատկանայ՝

թե ինչպես է հասունանում այդ գիտակցությունը և ոգ-  
նել, վոր նա հասունանա:

Հեղափոխական առաջավոր բանվորները պետք է հաս-  
կանան այս արհեստակցական միությունները անհրաժեշ-  
տությունն ու անխուսափելիությունը բանվորական լայն  
մասսաների համար: Այս անհրաժեշտությունը չի կարող  
միանգամից հենց պրոլետարիատի՝ իշխանությունը ձեռք  
ձգելու հետևյալ սրն անհետանալ:

«Չախության մանկական հիվանդությունը» գրքույ-  
կում կապիտալիստական յերկրների կոմունիստներին հա-  
մար Լենինն ասում է. — «Կապիտալիզմն անխուսափելի  
կերպով սոցիալիզմին ժառանգություն է թողնում մի կող-  
մից հին, դարերի ընթացքում առաջացած արհեստակցա-  
կան և արհեստավորական տարբերություններ բանվորնե-  
րի միջև, մյուս կողմից արհեստակցական միությունները,  
վորոնք միայն շատ դանդաղ, տարիների ընթացքում կա-  
րող են զարգանալ և կը զարգանան ու կը դառնան ավե-  
լի լայն, ավելի քիչ համբարային, արտադրական միու-  
թյուններ, (վոր կընդգրկեն ամբողջ արդյունաբերություն-  
ներ և վոչ միայն համբարություններ, արհեստներ ու  
պրոֆեսիաներ) և այնուհետև այդ արդյունաբերական  
միությունների միջոցով կը հասնեն մարդկանց մեջ  
գոյություն ունեցող աշխատանքի բաժանման վերացման  
և կը պատրաստեն ու կը դաստիարակեն մարդիկ,  
վորոնք բազմակողմանի զարգացած յեւլ բազմակողմանի  
պատրաստված են, վորոնք ամեն բան կարող են  
անել: Այդ բանին է կոմունիզմը ձգտում, պետք է ձգտի  
և կը նսննի, միայն յերկար տարիներից հետո: Փորձել  
հենց այսօր գործնականում կիրառել բոլորովին զարգա-  
ցած, կազմակերպված, ամբացած և հասունացած կոմու-  
նիզմի գալիք արդյունքը, կը նշանակի չորս տարեկան յե-  
րկսային բարձրագույն մաթեմատիկա սովորեցնել: Մենք  
կարող ենք և պետք է սկսենք սոցիալիզմը կատուցել վոչ  
թե ֆանտաստիկ և վոչ թե հատկապես մեր ստեղծած

մարդկային մատերիալով, այլ կապիտալիզմի թողած ժառանգութիւնով»:

### «ԻՆՔՆԱՄՓՈՓ» ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՌՎԻ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Սակայն Լենինը միաժամանակ պարզ գիտակցում էր, վոր բանվորների՝ ինքն իրեն թողնված արհեստակցական-տնտեսական կռիվը հղի յե մեծ վտանգներով:

Վերոհիշյալ «Ի՞նչ անել» գրքուկի մեջ Լենինը վրձնակոն կռիվ էր մղում ինտելիգենցիայի այն մասի հայացքների դեմ, վոր ինքն իրեն մարքսիստ էր համարում:

Ինտելիգենտների այդ խումբը, Կուսկովայի և Պրոկոպովիչի գլխավորութեամբ, վորոնք այժմ ապրում են սպիտակ գվարդիական գաղթականութեան մեջ, պնդում էր այն ժամանակ, վոր հարկ չկա ինքնուրույն բանվորական կուսակցութիւն կազմել, վոր մարքսիստական ինտելիգենցիայի գլխավոր ուշադրութիւնը պետք է ուղղված լինի դեպի բանվորների տնտեսական կռիվ կազմակերպումը: Առայժմ, — ասում էր «եկոնոմիստ» անունն ստացած այդ խումբը, — հարկ չկա ուշադրութիւն դարձնելու բանվոր գասակարգի քաղաքական կռիվ կազմակերպման վրա. թող ազատամիտ բուրժուազիան ցարիզմի դեմ կռվի, իսկ մենք առայժմ կը կազմակերպենք բանվորների արհեստակցական կռիվը. այն կռիվը, դեպի վորը տարերայնորեն մղվում են բանվորները ֆաբրիկաներում և գործարաններում ունեցած իրենց գրութեան շնորհիվ: Այնուհետև արդեն տնտեսական կռիվն ինքը կը մղի բանվորներին դեպի քաղաքականութիւն:

Լենինը իր վերոհիշյալ գրքուկում ցույց էր տալիս, վոր իր մեջ պարփակված տնտեսական կռիվը վոչ մի յերաշխիք չի տալիս, թե այդ կռիվը գասակարգային կզատուտ, թե նա կը համապատասխանի պրոլետարիատի առաջ կանգնած ընդհանուր գասակարգային հեղափոխական խնդիրներին:

«Մի՞թե, — հարց էր տալիս նա, — անգլիական տրեյդ-յունիոնները (արհեստակցական միութիւնները) թշնամական դիրք չեն բռնել դեպի սոցիալիզմը: Մի՞թե գերմանական բանվորների մի մասը միացած չէ կաթոլիկական ու միապետական բանվորական միութիւններին մեջ, մյուս մասը հիւր-դուկերիանի, վորը հիմնված է անգլիական տրեյդ-յունիոնիզմի բուրժուական յերկրպագուների կողմից»:

«Ճիշտ չէ, — ասում էր Լենինը, — վոր բանվորների տնտեսական կռիվը ինքն ըստ ինքյան տարերային կերպով մղում է բանվորներին դեպի գասակարգային քաղաքականութեան ուղին»:

Մյուս կողմից չի կարելի անջատել բանվորների տնտեսական կռիվը նրանց քաղաքական կռիվից: Բուրժուազիան յերբեք չի անջատում եկոնոմիկան քաղաքականութիւնից: Նա հրաշայի կերպով հասկանում է, թե իր տնտեսական պետքերի բավարարման համար ինչպիսի գնք է տալիս նրան կապիտալիստական պետութիւնը:

«Դատակարգերի ամենաեյական և «վճռական» շահերը, — գրում է Լենինը, — կարող են բավարարվել ընդհանրապես միայն արմատական քաղաքական վերանորոգումներով, իսկ մասնավորապես պրոլետարիատի հիմնական անտեսական շահը կարող է բավարարվել միայն քաղաքական հեղափոխութեան միջոցով, վոր բուրժուազիայի դիկտատուրան կիտխարինի պրոլետարիատի դիկտատուրայով»:

Յեթե տնտեսական կռիվը չի միանում պրոլետարիատի քաղաքական կռիվին, նա անխուսափելիորեն առաջ է բերում բանվորական միութիւնների յենթարկումը բուրժուական քաղաքականութեան: Այն ժամանակ բանվորական միութիւնների քաղաքականութիւնը հեղափոխական-գասակարգային լինելու փոխարեն դառնում է բանվորական գասակարգի բուրժուական քաղաքականութիւն: «Միջին» քաղաքականութիւն չկա և լինել չի կարող:

«Եկոնումիստները» այն ժամանակ ցուցահանում էին «անտեսական կռվին տալ քաղաքական բնույթ» լուրերը: Նրանք լրջորեն ընդունում էին, վոր հենց դրանով իրանք մտադրություն են հայտնաբերում նաև քաղաքական կռիվ մղել: Նրանք հատկապես ընդգծում էին, վոր բանվորները տաբերայնորեն դեպի անտեսական կռիվ են մղվում իրենց կյանքի պայմանների շնորհիվ, վոր բանվորը կը հասկանա միայն այն կռիվը, վոր կապված է նրա արնտեսական շահերի հետ:

Լենինը ծիծաղում էր այդ նշանաբանի վրա և ցույց էր առնում, վոր նրա հետև ուրիշ բան չի թագնված, բայց յեթե նույն այդ արհեստակցական պահանջներին հասնելու ցանկությունը, միայն որենսգրական ճանապարհով: Բայց չէ՞ վոր, — գրում էր Լենինը, — այդ անում են նաև անդլիական արհեստակցական միությունները: Նրանք ձեռք են բերում գործադուլի ազատություն, կանանց և յերեխաների պաշտպանության որենքների հրատարակություն և այլն:

Միթե այդ և պրոլետարիատի քաղաքական կռիվը: Ճիշտ չէ, ասում էր Լենինը, վոր բանվորները կարող են կռվել միայն այն նպատակների համար, վորոնք, բառիս նեղ իմաստով, անմիջականորեն կապված են նրանց անտեսական շահերի հետ: Քաղաքական կռվի մեջ պրոլետարիատի գիտակից ավանգարդը հանդես է գալիս վորպես թշնամի ամեն տեսակ ճնշման և ստրկություն: Նա հանդես է գալիս վորպես առաջնորդ բնակչության բոլոր աշխատավոր շերտերի՝ ընդդեմ ցարիզմի և կապիտալիզմի: «Եկոնումիստներն» իրենց նշանաբաններով իրապես ուզում էին բանվոր դասակարգի հեղափոխական-դասակարգային քաղաքականությունը, վոր ձգտում է պրոլետարիատի գիտատուրայի միջոցով վճռել բանվոր դասակարգի արմատական հարցերը, իջեցնել մինչ արեյդ-յունիոնիստական քաղաքականություն մակարդակը, վորն իրեն սահմանավակում է կռակկանոց խնդիրների կռվով:

Այսպիսով Լենինը պարզ և կարուկ կերպով ցույց տվեց այն վտանգները, վորոնք կանգնած են բանվորական արհեստակցական միությունների առաջ, յեթե նրանք զարգանան առանց բանվոր դասակարգի քաղաքական կռվի հետ կապվելու:

Այն մասսաները, վորոնք մտնում են միությունների մեջ, մտնում են այնպեղ իրենց համքարական, արհեստակցական շահերը պաշտպանելու ընդդեմ առանձին գործարանատիրոջ և կամ թե ընդդեմ նրանց միությունների: Այդ մասսաները տակավին հաղարավոր թելերով կապված են այն մանր բուրժուազիայի ստրկություն անիժյալ հուզեբանություն հետ, վորի միջավայրից նրանք դուրս են յեկել:

Հենց այդ պատճառով էլ ինքն իր մեջ պարփակված արհեստակցական կռիվը ամնում է դեպի պրոլետարական ույժերի բաժանումը ըստ արհեստակցական խմբավորումների և ըստ համքարությունների, նրանց միմյանց հակադրելով: Հենց այդ պատճառով էլ նման պարփակված կռիվը բանվորական արհեստակցական կազմակերպությունը տանում է դեպի յենթարկումն ունեվոր դասակարգի շահերին:

Ի՞նչը կարող է հիմնական յերաշխիք լինել բանվորական միությունների անելիքների նման ազճատման հնարավորությունների դեմ:

#### ՆԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ

Այդ հարցին Լենինը պատասխանել է իր պրոլետարական կուսակցություն ուսմունքով:

Լենինը մինչև Կոմինտերնի Համաժողովը գրած իր գրքույկներում արժարծել և գարգայրել է իր այդ ուսմունքը:

Նրա համար պրոլետարական կուսակցությունը կարող է պրոլետարիատի միայն մասը մի լինել: Կապիտալիստ-

տական սարկուժյան պայմաններն այնպես են, վոր հնարավորութիւնն չեն տալիս իր կազմակերպչական շրջանակների մեջն առնել բանվորութիւնն մեծամասնութիւնը: Չէ վոր կուսակցութիւնն մեջ մտնում են միայն ամենից ակտիվ, ամենից զիսակից և ամենից լինքնագոհ բանվորները:

Սակայն բանվոր դասակարգի մի մասը լինելով հանդերձ՝ կուսակցութիւնը ներկայացնում է ամբողջ դասակարգը: Լենինը սովորեցնում էր, վոր բանվոր դասակարգի կուսակցութիւնը բանվոր դասակարգից տարբեր շահեր չունի: Մինչև անգամ այն ժամանակ, յերբ Լենինը կովում էր «եկոնոմիստ»-ների դեմ և յերբ այդ պատճառով նա շատ բնական կերպով քաղաքական ինդիքները պետք է ստաջի պլանի վրա քաշեր, մինչև իսկ այդ ժամանակ Լենինն ազացուցում էր, վոր հետևողական հեղափոխականների տակտիկան վոչ միայն չի անտեսում տնտեսական կովի ինդիքները, այլ ընդհակառակը, մենակ նա ապահովում է նրանց իրագործումը: Բանվորների հեղափոխական կուսակցութիւնը արհեստակցական կովի ինդիքներն ևս իր ինդիքների մեջ է առնում, սակայն նա կապում է այն ընդհանուր դասակարգային շահերի հետ:

Հեղափոխական կուսակցութիւնը տարբերվում է բանվորների ամբողջ մասսայից նրանով, վոր «նա գիտում է բանվոր դասակարգի պատմական ուղին իր ամբողջութեամբ և աշխատում է այդ ուղիի բոլոր դարձակետերին պաշտպանել վոչ թէ բանվոր դասակարգի առանձին խմբերի, առանձին արհեստների, այլ ամբողջ բանվոր դասակարգի շահերը»:

Այսպիսով պրոլետարական կուսակցութիւնը բանվոր դասակարգի ուղեղն է, նրա ավանգարդը, նրա գլխավոր շտաբը:

Այդպիսի շտաբի ներկայութիւնը միայն կարող է պրոլետարիատի և կիսապրոլետարիատի դասակարգային կովի հաջողութիւնն ապահովել: Պրոլետարիատի ամբողջ

պատմական ուղին զիտող այդ շտաբը միայն կարող է նրա առանձին վաշտերին, նրա առանձին կազմակերպութիւններին դեպի հաղթանակը տանող ուղին ցույց տալ:

Դասակարգային կովի հակայական ասպարիզում պրոլետարիատը և նրա հետից գնացող աշխատավոր խավերն այս ու այն կողմն են տարածում իրենց առանձին վաշտերը: Այդ վաշտերը տարբեր տիպի գեներներ են, ճակատամարտների ընթացքը նրանք տարբեր աստիճանով են հասկանում և կազմակերպվածութիւնն տարբեր աստիճաններ ունին:

Ճակատամարտների ընթացքին նայած՝ այդ վաշտերն ստիպված են մերթ նահանջել, մերթ կատաղի գրոհի դիմել:

Պրոլետարիատի հաղթանակը միայն այն ժամանակ կարող է ապահովվել, յերբ նրա առանձին վաշտերը իրար հետ կապված լինեն մի գլխավոր շտաբի միջոցով, վորն առանձին մասերի վստահութիւնը նրանով կվայելի, յերբ նրանք այդ շտաբի ուղիղ գեկավարութիւնն մեջ համողվեն:

Այդպիսի շտաբի, այդպիսի ավանգարդի բացակայութիւնն արդյունքն այն կարող է լինել միայն, վոր պրոլետարիատի առանձին մասերի չհամաձայնեցված գործողութիւններ տեղի կունենան, վորոնցից վումանք պարտութիւնն կկրեն և կը ջախջախվեն, իսկ մյուսներն ել թշնամու ձեռքում գերի կը դառնան, գերի վոչ միայն Փիլիբական, այլև գաղափարական իմաստով:

#### ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պրոլետարական կուսակցութիւնն զերի և բանվորների դասակարգային կովի պայմանների զարգացման այս ըմբռնումիցն ել բղիտում է Լենինի համար նրա կուսակցութիւնն և արհմիութիւններն անհրաժեշտ փոխհարաբերութիւնն ըմբռնումը: Վորպէս զի միութիւններն քաղաքականութիւնը բանվոր դասակարգի ընդհանուր շահերին է վընաս չգնա, դրա հիմնական յերաշխիքն ըստ Լենինի այն

կըլինի, վոր կուսակցութիւնը ղեկավարի վոչ միայն բան-  
վորների քաղաքական կռիվը, այլ նաև նրանց սնտեսա-  
կան կռիվը: Կուսակցութիւնն այդ ղեկավարութիւնը պետք  
է արհմիութիւնների միջոցով իրագործի. այդ դեպքում  
բանվորների առանձին խմբակների մասնակի բաղխումները  
կարող են դասակարգի մեկ կազմակերպված կովի  
մեջ միացվել:

Լենինը կուսակցութեան և միութիւնների միջև այդ  
սերտ կապի հաստատմանը մեծ նշանակութիւն էր տա-  
լիս:

Ինչպես հայանի յե, այդ հարցի մասին մենշեիկների  
և բայըլեիկների միջև կռիվ կար: Այդ կռիվը տեղի յեր ու-  
նենում միջազգային մասշտաբով: Անփոփոխ այնպես էր  
լինում, վոր բացահայտ համաձայնողական սարքերն ար-  
տահայտվում էյին հոգուտ արհշարժման «չեզոքութեան»,  
«անկուսակցականութեան», քաղաքական կովից «անկախ»  
լինելուն:

Արհմիութիւնները, սոսում էյին նրանք, չպիտի քա-  
ղաքականութեան հարցերով զբաղվեն, դրա համար գոյու-  
թիւն ունի կուսակցութիւնը: Սակայն ժխտելով քաղա-  
քականութեան անհրաժեշտութիւնը միութիւնների մեջ,  
բոլոր յերանգի ուժերմիտներն իսկապես ժխտում էյին  
միայն հեղափոխական քաղաքականութեան անհրաժեշտու-  
թիւնը, վորովհետև միութիւնների հրաժարվելը կուսակ-  
ցութիւնից կը նշանակեր, իրապես ընդունել բուրժուական  
քաղաքականութիւնը, այսինքն՝ մի քաղաքականութիւն,  
վորը կը պահպաներ և կամրացներ բուրժուական հասա-  
րակակարգը և վոչ թէ կը խորտակեր այն:

«Չեզոքութիւն», «անկուսակցականութիւն» և «ան-  
կախութիւն» իրապես նշանակում էյին՝ նեցուկ դառնալ  
բուրժուազիային, հարել նրա քաղաքականութեանը և կա-  
խում ունենալ նրանից:

Լենինն այդ բոլորը պարզեց համաձայնողական տե-  
սութիւնների հենց հանդես գալու ժամանակ: Սկսած իր

առաջին հողվածներէց նա դրեց կուսակցութեան և միու-  
թիւնների սերտ կապի լողունը:

1907 թ. 11 ինտերնացիոնալի Շտուտգարտի համա-  
ժողովն ընդունեց մի բանաձև, վոր խոսում էր կուսակ-  
ցութեան և միութիւնների սերտ կապի անհրաժեշտու-  
թեան և այդ կապի ամրապնդման մասին: Այդ բանաձևը  
մշակված էր բայըլեիկների ներկայացուցչի գործոն մաս-  
նակցութեամբ: Լենինն այդ բանաձևը ընդունելը համարում  
էր հեղափոխական թևի հողթանակ համաձայնողական թե-  
վի վրա:

1905-6 թ. հեղափոխութեան պարտութեանը հաջոր-  
դող հետադիմական տարիներին Լենինը հակապես ան-  
հրաժեշտ էր համարում, վոր բայըլեիկները պայքարեն  
արհմիութիւնների վրա ազդեցութիւն ձեռք բերելու հա-  
մար:

Լենինն այն ժամանակ յերկու ձևատում էր կըու-  
վում, — նա համառ պայքար էր մղում լիկվիդատորների  
դեմ, վորոնք առաջարկում էյին վերջ տալ կուսակցու-  
թեան գաղանի անլեզալ կազմակերպութեանը և ստեղծել  
լայն լեզալ բանվորական կուսակցութիւն: Մյուս կողմից  
նա վճռական կռիվ էր մղում բայըլեիկների ներսում յե-  
ղած իբր թէ «ձախ» թևի դեմ, վորոնք առաջարկում էյին,  
վոր կուսակցութիւնը հրաժարվի պետական դուռայում և  
լեզալ բանվորական կազմակերպութիւնների (միութիւն-  
ների հետ) մեջ աշխատելուց, վորովհետև, իբր թէ, կուսա-  
կցութեան այդ տեսակ մասնակցութիւնը մասնանշած  
հիմնարկութիւնների և կազմակերպութիւնների մեջ կը  
շեղի պրոլետարիատին և կուսակցութեանը հեղափոխական  
ապստամբութիւն կազմակերպելու նրանց անմիջական  
նպատակից:

Լիկվիդատորների գաղափարը Լենինը համարում էր  
բանվորական շարժումն Ռուսաստանում բուրժուազիայի  
քաղաքականութեան ուղիով տանելու մի փորձ: Լիկվիդա-  
տորների համար Ստալիպլինի ուժերմի սրբ լայն բանվո-

րական կուսակցութիւնը նրա համար եր պետք, վորպէս զի նրանք գաղտնի կազմակերպութեան կորիզի շուրջը համալմբված հեղափոխական կուսակցական կազմերը ցրված սան: Այդ լայն կուսակցութեան անորոշ ձևերը, նրա հեղափոխական բանվորութեան բացակայութիւնը պետք է լիկվիրատուներին սոցներ, վոր նրանք նորին մեծութիւն ցարի մաս սպարոզիցայի դերը խաղային: Նրանց ծրագիրն եր՝ վերացնել հեղափոխական շարքը և ցարական սեփմի համար շիրմա կառուցել:

Լենինն ինչ կարող եր ուսուցանել Ռուսաստանի հեղափոխական բանվորութեանը, յեթե վոչ պայքարել վճռականորեն բուրժուական այդ խզճուկ մարի դեմ:

Լենինը վոչ պակաս յեռանգով կռիվ եր մղում բայլշևիկյան ֆրակցիայի ներսում յեղած «ձախ» թեի (այսպէս կոչված «ոտգովիսաների») դեմ:

Լենինը հեղափոխութեան ընթացքը լրջմիտ վերլուծելով, ինչպէս հաճախ մինչ այդ արել եր և ինչպէս զրանից հետո արել է շատ անգամ, չեր վախենում հաստատել, վոր հեղափոխութեան արիքը նվազել է: Ռազմագաշտից ժամանակավորապէս նահանջած կուսակցութեան կարեւոր խնդիրն է՝ ձեռքից բաց չթողնել այն մասսաների ղեկավարութիւնը, վորոնք 1905-6 թ. թ. հեղափոխական բարձրացման ժամանակ մտակցել էին կուսակցութեանը: Ռուսի Լենինը պահանջում եր ողորդութիւնը բոլոր լեզայ, թե անլեզայ հնարավորութիւնները, վորպէս զի մասսաների հետ կապվելու խնդիրը լուծվի: Նա մասնավորապէս կանգ եր առնում այն բանի վրա, թե անհրաժեշտ է պայքարել արհեստակցական միութիւնները վրա ազդեցութիւն ձեռք բերելու համար: Լենինն այդ ժամանակ կենդանի հետաքրքրութիւն եր ցույց տալիս միութիւնները մեջ ազդեցութիւն ձեռք բերելու կովին, հոգվածներ եր գրում արհեստակցական մամուլում, ուշադիր ուսումնասիրում եր տնտեսական գործադուլների վիճակագրութիւնը: Յեզ նրա զիծը տանում գեպի առաջին մեծ հազթա-

ակը, 1913 թ. նվաճում են Լենինգրանի Մետաղագործների Միութիւնը, Լենինգրազի բանվորութեան այն շերտը, վոր դեռ յերկար տարիներ կուսակցութեան հիմքն եր կազմում:

Մտաւորապէս նույնպիսի նշանակութիւն ուներ Լենինի գաղափարական ղեկավարութեամբ բայլշևիկները կրովը Լենինգրազի ապահովագրական կազմակերպութիւնների մեջ:

Կուսակցութեան արհմիութիւնները վրա ազդեցութիւն ունենալու կովի այդ լուրնը Լենինը ավեց նաև կոմիսարներին:

«Չաշխատել հետադիմական արհմիութիւնները ներսում,— գրում է Լենինը յուր «Չախութեան մանկական հիվանդութիւն» գեղեցիկ զրքույկի մեջ,— նշանակում է բավականաչափ չզարգացած և հետամնաց բանվորական զանգվածները թողնել հետադեմ առաջնորդների՝ բուրժուապիլայի գործակալների, բանվորական «ազնվականների» կամ «բուրժուայացած բանվորների» ազդեցութեան տակ»:

Մասսաների վրա ազդեցութիւն ձեռք բերելու կրովի մեջ կոմունիստները չպիտի վախենան իրենց հանդիպող դժվարութիւնները: Լենինի հիմնական լուրնընքն եր,— «անսպասան աշխատել այնտեղ, ուր մաստա կա»:

Դրա համար ել նա մեղադրում եր «ձախ» կոմունիստներին, վորոնք վճռական պայքար չեյին մղում միութիւնները պառակաման դեմ: Միջազգային սեփորմիզմն սկսում է զիմել և հիմա ել զիմում է միութիւնները հեղափոխական տարրերը վտարելու միջոցին, յերբ նա հավատը կորցնում է, թե այսուհետե ել կարող է իր ազդեցութիւնը պահպանել:

Գերմանիայի և ուրիշ յերկրները «ձախ» կոմունիստները փաստորեն սեփորմիստներին նպաստեցին՝ զուգընթաց զուտ հեղափոխական միութիւններ ստեղծելու իրենց լուրնընգով:

Իսկ Լենինը սովորեցնում եր, թե մասսաների վրա ազդեցութիւն ձեռք բերելու կովում չպիտի վախենալ

«առաջնորդները» «բժարինդրությունից, վոսնձգությունից, վիրավորանքներից, հալածանքներից... Պետք է կարողանալ ամեն զրկանք տանել, ամենամեծ խոչընդոտները հաղթահարել՝ սխտեմատիկորեն համառ, անհողողող և համբերատարությամբ պրոպագանդ և ազիտացիա մղել հենց այն հիմնարկներում, ընկերությունների և միությունների մեջ, ինչքան էլ վոր նրանք հետադեմ լինեն, վորտեղ միայն պրոլետար կամ կիսապրոլետար մասսա կա»:

Արհեստակցական միությունների վրա ազդեցություն ձեռք բերելու կռվին Լենինը մեծ նշանակություն էր տալիս: Նրա համար այդ կռիվը այն մասսաների համար մղված կռիվն է, վորոնք միությունների մեջն են, այն բանվորների, վորոնք դասակարգային զիտակցության առաջին քայլն արել են, վորոնց սակայն ամեն կերպ պետք է հաջորդ, ավելի բարձր աստիճանին հասցնել, վորպես զի պրոլետարիատի հեղափոխական առաջապահի հաղթանակն ապահովվի:

Ըստ Լենինի միությունները մի տեսակ հսկայական փոխադրական մեխանիզմ են կուսակցությունից զեպի դասակարգը: Կուսակցության կարևոր սլարտականությունն է՝ հոգ տանել, վոր այդ մեխանիզմն ուղիղ գործի:

Ահա ինչ է գրում Լենինը յուր «Ձախտության մանկական հիվանդությունը» գրքում ի հրահանգ կապիտալիստական յերկրներում կռվող կոմունիստների. — «Այդ կռիվը (ոպպորայունիստների, «բանվորական արիստոկրատիայի» դեմ) պետք է տանել անխնա և անպայման հասցնել այնտեղ, ինչպես մենք արինք, վոր ոպպորայունիզմի և սոցիալ-շովինիզմի անուղղելի բոլոր առաջնորդները վարկաբեկվեն և վտարվեն միություններից: Ձի կարելի քաղաքական իշխանությունը նվաճել (և չպիտի փորձել նվաճել այն) քանի դեռ այդ կռիվը վորոշ աստիճանի չի հասել, ընդամին զանազան յերկրներում և զսնազան հանդամանքներում այդ «վորոշ աստիճանը» միտեսակ չե. յուրաքանչյուր յերկրում սլրոլետարիատի միայն խոհուն և փորձված առաջնորդները կարող են վորոշել այդ «վորոշ աստիճանը»:

Լենինի համար այսքան էյական էր թվում, թե ինչ չափով կոմունիստներին կը հաջողվի ազդեցություն ձեռք բերել միությունների մեջ:

#### ԿՈՒՎ ԱՐՇՏԱՐԺՄԱՆ «ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ» ՅԵՎ «ՉԵԶՈՔՈՒԹՅԱՆ» ԴԵՄ

Դասակարգային կռվի զարգացման ընթացքի և միությունների դերի այս ըմբռնումից էլ բղխում է Լենինի համար միջազգային և ուսական այս բանվորական հոսանքների դեմ ամենավճռական կռիվ մղելու անհրաժեշտությունը, վորոնք իրենց ոպորայունիզմը ծածկում էյին արհեստակցական շարժման «չեզոքության» և «անկախության» դրոշի տակ:

Ի՞նչ էյին նշանակում այդ լոգունգները: Նրանք նշանակում էյին այն, վոր միությունները պետք է իրենց գործունեյությունը ունենան «անկախ» բանվորների քաղաքական կուսակցությունից, վոր միությունները իշխանությունը ձեռք բերելու համար մղած քաղաքական կռվի խնդրում պետք է «չեզոք» լինեն: Ըստ այս «տեսության» միությունների միակ նպատակն է՝ կռվել բանվորների սնտեսական շահերի համար, աշխատավարձի բարձրացման, աշխատանքի ավելի լավ պայմանների համար և այլն:

Այս դեպքում նրանք մոռանում էյին Մարքսի ուսմունքի այբբենական ճշմարտությունը, թե՛ քանի դեռ սեփականությունը կապիտալի ձեռքն է, քանի դեռ պետությունը նրա ձեռքն է, բանվոր դասակարգը չի կարող արմատական կերպով բարվելաել իր վիճակը, վոր կապիտալիզմի հետևանքը, քանի դեռ նա կա, կը լինի աղքատացման աճում, ամենալայն բանվորական մասսաների շահագործում և ճնշում, վոր այդ պատճառով բանվոր դասակարգի սնտեսական կռիվը չի կարելի բաժանել կապիտալիզմի դեմ առհասարակ ուղղված նրա քաղաքական կրոնվից:

Կապիտալիզմի անցյալ դարավերջի և արդի դարա-

սկզբի տաճնամյակները բարձրացումը ստեղծել է յեվրոպական և ամերիկական բանվորների մի բարձր շերտ, վոր լավ է վարձատրվում և պրոլետարիատի մասսաների մի զգալի մասի համար կապիտալիզմի որոք բանվորի կյանքը մարգավարի կարգավորելու պատրանքն է ստեղծվել:

Այս հոգի վրա յեւ զարգացել է ռեֆորմիզմը, վորը հավատում էր, թե արհեստակցական միություններն իրենք-իրենց կարող են բանվորների կենսական մակարդակն զգալի բարձրացնել: Կապիտալը տապալելու, ուրեմն՝ բանվորական-հեղափոխական քաղաքականության խնդիրը հետ եր մղվում զեպի մշուշապատ հեռուները, սկսվում է Մարքսի ուսմունքի քննադատությունը:

Փաստորեն ռեֆորմիզմի նույն վողով համակված էյին արևմտյան յեվրոպական սոցիալիզմի առաջնորդներից շատերը, վորոնք թեև տեսականում Մարքսի ուսմունքի քննադատությունը մերժում էյին, սակայն գործնականում իրենց ամբողջ քաղաքականությունն ու գործելակերպը կառուցում էյին ռեֆորմիստների նման:

Համաշխարհային պատերազմը, բոլոր յերկրների սոսկալի աղբառացումը, շահագործման և բանվոր դասակարգի թշվառացման աճումը ցույց տվին, թե վորքան անհիմն էր բանվոր դասակարգի այն հույսը, վոր խաղաղ ճանապարհով իր կենսական պայմանները հեռզհետ կը բարվորվեն կապիտալիզմի ժամանակ: Հենց այդ պատերազմը և նրան հաջորդող զեպքերը պատուեցին մինչպատերազմյան սոցիալիստական շարժման վերին շերտերից շատերի դիմակը և ցույց տվին, վոր նրանք իրականում բուրժուազիայի գործակալներն են բանվորական կազմակերպությունների մեջ, կապիտալի ամենաստոր գործակատարները:

Լենինն իր գործունեյության հենց սկզբից կատաղի կռիվ էր մղում միջազգային բանվորական շարժման այդ համաձայնողական, ռեֆորմիստական ուսմունքների դեմ:

Դասակարգային կռիվի մեջ, ուսուցանում էր Լենինը՝

հետևելով Մարքսի ուսմունքի ճշմարիտ վողուն, չեզոք չի կարող լինել: Կապիտալիստական հասարակակարգում չի կարելի մասնակից չլինել արգյունքի կամ բանվորական ուժի փոխանակության:

«Իսկ փոխանակությունը, գրում է Լենինը, անխուսափելիորեն տնտեսական և դրա հետևանքով նաև քաղաքական կռիվ է ծնում: Այդ կռիվի հանդեպ անտարբեր լինել, չի նշանակում իսկապես կռիվից հեռանալ, նրան մասնակից չլինել կամ չեզոք մնալ: Անտարբերությունը կը նշանակի՝ լուելյայն նպաստել նրան, ով իշխում է, ով ուժեղ է: Քաղաքական անտարբերությունը քաղաքական հազեցածություն է: Յեթե մեկը հացի կտորի նկատմամբ անտարբեր է, չի նշանակում, թե այդ մարդը հացի կարիք ունի, այլ այն, վոր նրա հացն ընդմիշտ ապահովված է, վոր նա հացի կարիք յերբեք չունի, նոր նա «կուշտերի կուսակցության» մեջ պինդ տեղավորվել է»:

(«Новая жизнь», 1905 թ. № № 22, 27):

Այդ պատճառով Լենինն իր ամբողջ գործունեյության ընթացքում կուսակցությանը սովորեցրել է կատաղի կռիվ մղել նրանց դեմ, ովքեր կանգնած լինելով մասսայական բանվորական կազմակերպությունների գլուխ՝ «չեզոքություն» և «անկախություն» յեն քարոզում, վորովհետև իրականում դա «կուշտերի» բուրժուազիային ոգնելու բարոզն է:

Լենինը չեզոքության այդ քարոզիչներին վորակում է վորպես «բուրժուազիայի գործակալներ բանվորական շարժման մեջ»:

Արևմտյան Յեվրոպայի միությունների ռեֆորմիստ զեկավարները՝ Գոմպերաները, Հինդերսոնները, ժուռները, Լեզիներն իրենց հագուստով և արտաքին վայլով են միայն տարբերվում Զուրատովներից, ցարական այդ պահնորդական բաժնի հերոսից, վոր բանվորների տնտեսական կռիվը ցարի համար ցանկալի հունի մեջ էր ուզում գնել:

Նա միությունների այդ ռեֆորմիստ առաջնորդներին



պելու, իրենց հետևից տանել անկուսակցական բան-  
վորների ծանր, բայց դեպի դասակարգային զիտակցու-  
թյան ավելի բարձր աստիճանները գնացող մասսաները:

Համբերութամբ դաստիարակել, սովորեցնել, գրավել  
աշխատավորների ավելի ու ավելի լայն շերտերը,— ահա  
այդ ավանդարդի անելիքը: Լենինը շատ լավ եր հասկա-  
նում ավանդարդի ուշադիր և տակտով մերձեցումը ան-  
կուսակցական մասսաներին:

Այս տեսակետից կարևոր է միությունների կուսակ-  
ցականության հարցը լուսաբանել:

Յեթե միությունների կուսակցականությունն ասելով  
հասկանանք այն, վոր միությունների սերտ կապը կու-  
սակցության հետ անհրաժեշտ է, վոր կուսակցությունը  
միությունների իրական ղեկավարությունը նրանց մեջ  
կատարած իր աշխատանքով պիտի նվաճի, ապա Լենինը  
հենց այդպիսի կուսակցության բարոգոյն եր ընդդեմ ան-  
կուսակցականության, չեզոքության և անկախության, վո-  
րոնց քարոզիչները բոլոր տիպի և գույնի համաձայնողա-  
կաններն են:

Իսկ յեթե միությունների անկուսակցականությունն  
ասելով հասկանանք այդ կազմակերպությունների ձեվա-  
կան կուսակցականությունը, ապա Լենինը արհեստակցական  
կազմակերպությունների անկուսակցականության կողմնա-  
կից եր:

Ձևական կուսակցական միությունը, հենց իբրև այդ-  
պիսին, կը խրատեցներ անկուսակցական մասսաներին և  
այդ պատճառով իր առաջադրած նպատակներին հասնել  
չեր կարող: Նա չեր կարող գրավել և դասակարգային  
կովի վողով դաստիարակել լայն մասսաներին, վորոնք  
դեռ կուսակցական չեն, վորոնք դեռ նոր են անում դա-  
սակարգային զիտակցության առաջին բայերը: Ձևական  
կուսակցական միությունն այդ պատճառով վրասակար է,  
նա չի կարող կոմունիզմի դպրոցի դեր կատարել: Մյուս  
կողմից ձևական կուսակցական միությունը կուսակցական

կազմակերպության շրջանակները դարձնում և չափազանց  
այն, անորոշ, մինչդեռ ավանդարդի զիտակից, կազմա-  
կերպված և կարգապահ լինելն անհրաժեշտ պայմանն է,  
վորովնա հաջողությամբ կկարողանա իրագործել կովող  
պրոլետարիատի գլխավոր շտաբի իր անելիքները:

Ահա թե ինչն է— յեթե Լենինը ուղորտյունիսաների  
հետ ունեցած իր առաջին գաղափարական կովի տարինե-  
րին միությունների «կուսակցականության» լողունգներ  
եր տալիս, ապա հիմա կովի ամբողջ պատմության լույսի  
տակ և Լենինի ամբողջ ուսմունքն ի նկատի առնելով—  
այդ լողունգը պիտի ըմբռնել վորպես ուղորտյունիսաների լո-  
ղունգի նակաղշիտ, վորով ուղում եր խիստ դատել հեղա-  
փոխականներին այն մարդկանցից, վորոնք «անկուսակ-  
ցականության» դրոշը պարզելով իսկապես մտադրու-  
թյունի «կուշտերի» կուսակցությանը հարելու:

«Ձախության մանկական հիվանդութունը» գրքույկի  
մեջ, ուր ուսս պրոլետարիատի կովի փորձը խտացած ձե-  
վով մյուս յերկրների պայքարող պրոլետարիատին է հա-  
ղորդված, Լենինը նորից փայլուն ձևով շարադրեց միու-  
թյունների և կուսակցության դերի իր ըբռնումը:

Այդ գրքույկի մեջ Լենինը հեղափոխության համար  
«մեծագույն թյուրիմացություն», «մեծագույն վրտա» է  
համարում այն, վոր Արևմուտքի «ձախ» կոմունիստները՝  
պատրվակ բռնելով արմիությունների «հետադիմականու-  
թյունը» քարոզում են հրաժարվել նրանց մեջ աշխատե-  
լուց: Գերմանիայի «ձախ» կոմունիստները հատկապես  
առաջարկում եյին, վոր կոմունիստներն ու հեղափոխակա-  
նորեն տրամադրված բանվորությունը Շայգեմանների ղեկա-  
վարության տակ գտնվող հին միություններից դուրս գան  
և կազմեն մեկ «բանվորական միություն»: Լենինը «ձախ»  
կոմունիստների այդ գործելակերպը ծաղրում եր, վորոնք  
մտքով հնարում եյին «նոր, մաքուր, բուրժուական-դեմո-  
կրատական նախապաշարումներից զերծ, համբարային և  
հեղափոխական մեղքերից անարատ մի «Բանվորա-

կան Միության», վորն իբր թե կը լինի (կըլինի!) լայն վորի մեջ մտնելու համար հարկավոր է միայն (միայն) «խորհրդային սիստեմն ու դիկտատուրան ընդունել»:

Միության մեջ մտնելու համար այդպիսի պայմաններ գնել, մասսայական բանվորների կազմակերպությունների մեջ կոմունիստների ունենալիք խնդիրներին այդպես վերաբերվել, կը նշանակի հրաժարվել ավանգարդական արտադրական աշխատանքներից, խրանեցնել այնպիսի մասսաներին, վորոնք դասակարգային կովի առաջին դասերն են սովորում:

Ռ. Կ. Կ. Կ. Կ-ի վերջին բանաձևի մեջ, վոր հաստատված է 1922 ՄԼ կուսակցական համագումարի կողմից և վերաբերում է միությունների դերի հարցին նե<sup>9</sup>-ի շրջանում, Լենինը միանգամ ևս ուսու միությունների համար գրում է. — «Արհմիության անդամներից վաղ մի կերպ չի կարելի պահանջել վորոշ քաղաքական աշխարհահայացք: Այս մտքով, ինչպես և կրոնի խնդրում, արհմիությունները պիտի անկուսակցական լինեն»:

Միությունները ձևականորեն անկուսակցական պիտի լինեն այն պատճառով, վոր նրանց մեջ շատ լայն մասսաներ են մտնում, վորոնք դասակարգային կովի միայն առաջին քայլերն են անում. միությունների մեջ նրանք ավանգարդի դեկավարությամբ այդ կովի առաջին դասերն են առնում. ավանգարդի, վորը յուր պայքարով, իր գործունեությամբ զանգվածների վստահությունն է գրավում և դառնում նրանց ճանաչված առաջնորդը: Ձևական կուսակցականություն հարցի մեջ շտապել, կը նշանակե անհամբերություն ցույց տալ և արհեստակցական միությունների, վորպես կոմունիզմի դպրոցի, յուրահատուկ դրությունը չհասկանալ:

Կատարի, վճռական կռիվ հետադիմական առաջնորդների դեմ և շատ համբերատար վերաբերմունք դեպի մասսաների «հետադիմականությունը», — ահա ինչ է ուսուցել Լենինը:

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՈՍՈՒՆԻՍՏՆԵՐԸ ՊՐՈՑԵՍՍԻՈՆԱԼԻՍ ԵՆ

Կուսակցության դերի և նրա — միությունների նըրադատմամբ ունեցած վերաբերմունքի Լենինյան ըմբռնությունից բխում է հարցի մի այլ կողմն ևս, այն է կուսակցության վերաբերմունքը դեպի իր այն անդամները, վորոնք բանվորական լայն կազմակերպությունների, արհեստակցական միությունների մեջ յեն աշխատում:

Կուսակցությունը կովող պրոլետարիատի ավանգարդը, նրա գլխավոր շտաբն է: Այդ գլխավոր շտաբը լավ չի լինի, յեթե առանց դեկավարության թողներ կուսակցության այն մասը, վոր կովում է բանվորական լայն մասսաների վրա ազդեցություն ձեռք բերելու համար, կամ նրանց գլուխն անցած դասակարգային կովի վորեւե ճակատամասում մարանչում է:

Մյուս կողմից լավ չի լինի նաև կուսակցության այն գործառնը, վորն ամենախիստ կարգապահություն չի պահպանում իր շարքերում գլխավոր շտաբի նկատմամբ, կամ վորն իրեն հավասարաբեք է համարում շտաբի համեմատությամբ: Կուսակցությունը պիտի դեկավարի միությունների մեջ աշխատող յուր անդամներին, վորոնք առանց ընդգրկմանալու պետք է յենթարկվեն ընդհանուր կուսակցական դեկավարությանը, — այս սկզբունքները Լենինը պաշտպանել է կուսակցության առաջին քայլերից սկսած, նա գործադրել է այդ կուսակցական ամենորյտ աշխատանքների ընթացքում, նա այդ հայացքները պատվաստել է նաև մյուս յերկրների կոմունիստական կուսակցություններին:

Արեմայան յերկրներում այն նախապաշարմունքը, թե արհմիությունները բանվորական շարժման ինքնուրույն ձևեր են անկախ դասակարգային-քաղաքական կրոնից, բեֆուրմիստների, սոցիալիստական կուսակցությունների մեծամասնության, անաբխիստ սինդիկալիստների (վերջիններս առհասարակ ժխտում են պրոլետարիատի

հատուկ կուսակցական կազմակերպութեան անհրաժեշտութեանը) շնորհիվ այնքան և արմատացել, վոր այդ նախապաշարունակներն իրենց ազդեցութեանն ունեցան նախընտրատարգ կոմունիստական կուսակցութեանն ի վրայ նրանց կռիւ սկզբում:

Պրոֆեսսիոնալիստ-կոմունիստները դժվարութեամբ ընտելացան այն բանին, վոր կուսակցական որդանները նրանց գործունեութեանը ղեկավարեն, ինչպէս և վերջիններս ել դժվարութեամբ եյին այդ ղեկավարութեանն իրագործում:

Սոցիալ-դեմոկրատները և անարխիստները բերանում կոմունիստները ղեկ ուղղված սարսափելի բաներից մեկն ել այն եր, և մինչև հիմա յել այն ե, վոր կոմունիստները միութեանները ներսում «բջիջներ» և «ֆրակցիաներ» յեն կազմում: Սոցիալ-դեմոկրատները միութեան անկուսակցական անգամներին դրանով ուզում եյին վախեցնել Բայց դա մի առանձին հաջող ձև չե:

Մինչև իսկ ամենահետագեմ յեվրոպական բանվորը մի առանձին սարսափելի բան չի գտնում, վոր միութեանները մեջ աշխատող կոմունիստներն իրենց ֆրակցիան ունեն, ուր նրանք միութեան որակարգի հարցերը կուսակցութեան ղեկավարութեամբ լուծում են:

Կարծես թե, յեթե Լենինի բռնեցով ասենք, ունիոր միատական միութեանների Զուբատովյան առաջնորդները Գոմպերսներ, Հինգերսոններ և Փոլսներ՝ խոսքները մեկ չեն արել թե ինչպէս զործ գնեն սարկներով ձեռք բերած իրենց ազդեցութեանը միութեանների ապարատների վրա, վորպէս զի խանգարեն բանվորները հեղափոխական կռիւ . . .

Մի կողմից միութեան միջի կոմունիստական ֆրակցիայի և կուսակցական ղեկավար որդանները, մյուս կողմից ֆրակցիայի և միութեան որդանները փոխհարաբերութեան ճիշտ վորոշելը Լենինի համար մեծ նշանակութեան ունե:

Լենինի ղեկավարութեամբ այդ փոխհարաբերութեաններն այնպէս ղրվեցին, վոր թե կուսակցութեանը կարող եր ղեկավարել կոմունիստ-պրոֆեսսիոնալիստներին, և թե վերջիններս համար ստեղծվեցին միութեանների մասսաներին մերձենալու ամենանպատահարմար տակառիկական ձևեր:

Միութեանը ձևականորեն անկուսակցական կազմակերպութեան ե: Կոմունիստները նրա մեջ ղեկավար ազդեցութեան են ձեռք բերում միայն մասսաները վաստահութեանը գրավելով: Կուսակցութեանը ղեկավարում ե կոմունիստական ֆրակցիաները, վորոնք ամբողջովին և անվերապահ յենթարկվում են կուսակցութեանը:

Լենինն իր գործունեութեան ամբողջ ընթացքում կուսակցութեան բոլոր մասերը կարգապահութեան այս անհրաժեշտութեանը միշտ շեշտել ե: Միութեան մեջ աշխատող կոմունիստը պետք ե կապ հանդիսանա ավանգարդի և բանվորական մասսաների միջև: Յեթե այդ կապը խախտվի, բանվորութեան ամբողջ կռիւը կարող ե մեծ վնաս կրել:

Կուսակցութեան, ֆրակցիայի և անկուսակցական կազմակերպութեան փոխհարաբերութեանների այդպիսի կառուցումը հնարավորութեան ե տալիս Ռուսաստանի կոմունիստական կուսակցութեանն արհմիութեանների միջոցով ղեկավարել հսկայական անկուսակցական մասսաներին: Ինչ չափով վոր մյուս յերկրներում մասսաներին կոմիստներնի քաղաքականութեան և գործելակերպի կողմը կարելի յե գրավել, այն չափով ել այդ յերկրները կոմունիստական կուսակցութեանները կարող են միութեանները հզոր միջոց ծառայեցնել պրոլետարիատի բազմամիլիոն մասսաների հետ կապվելու համար:

\* \* \*

Արհմիութեանների ղերի և նրանց՝ կուսակցութեան հետ ունեցած փոխհարաբերութեան Լենինյան ըմբռնումը

հիմնական գծերով այս է: Այդ բմբռնումը կազմվել է տասնամյակների ընթացքում, սակայն նրա հիմնական գծերը արված են դասակարգային կովի մեծ ստրատեգի հեղափոխական գործունեությունից հենց սկզբի շրջաններում:

Կուսակցությունը բանվոր դասակարգի ուղեղն է, ավանգարդը, վորը հեղափոխական կռիվ է մղում կապիտալի դեմ: Այդ ավանգարդի մեջ բանվոր դասակարգի միայն մի մասն է գտնվում: Կուսակարգն ամբողջովին վերցրած քաղկացած է այնպիսի տարրերից, վորոնք իսկապես սարսափ դասակարգային տոկոսություն չեն գիտակցություն չունին:

Հենց այն պարզ իրողությունը, վոր բանվորն իր տեղը վորպես ապրանք ծախում է, ստիպում է նրան միանալ: Սկզբնական ցար ու ցրիվ վիճակից նա անցնում է արևատակցական կազմակերպվածություն: Սա մի հսկայական քայլ է առաջ:

Տնտեսական կովի ճիշտ հասկացված ինդիքները լծույլ չեն տալիս այն գատելու պրոլետարիատի քաղաքական կովից, վորովհետև դասակարգերի վճռական շահերը կարող են բավարարվել միայն քաղաքական արմատական վերանորոգությունների միջոցով:

Ամբողջ դասակարգի հեղափոխական կովի նեղ շկայված տնտեսական կռիվը նեղությունը կարող է դառնալ «բանվոր դասակարգի բուրժուական քաղաքականություն»:

Հեղափոխական կուսակցություն չեն միությունների կազմվել են այն իմասական յերաշխիքը, վոր բանվորական արևատակցական կազմակերպությունները չայլասեղվեն ու դառնան բուրժուական կազմակերպություններ: Միաժամանակ կուսակցությունը միությունների մեջ ունի իսկողնիչ մեխանիզմներ պրոլետարիատի լայն առաջին շերտերի նեղ կազմելու համար: Բանվոր դասակարգի գլխավոր շտաբը միությունների միջոցով կազմվում է պրոլետարիատի այն շերտերի նեղ, վորոնք կապիտալիզմի դեմ դուրս յեկող բանակը պիտի կազմեն: Կռիվը

միությունների համար՝ կռիվ է մասսանների համար:

Այդ կռիվը յենթադրում է նախ յեվ առաջ, ամենից վճռական, ամենից անխնայ, ամենից յեռանդուն պայքար ռեֆորմիստ առաջնորդների, յեսքով սոցիալիստների, քայց գործով բուրժուազիայի գործակալների դեմ, նրանց շեղոթության, անկախության լրգունգների դեմ:

Սակայն ձգտել, վոր հեղափոխական կուսակցությունը միությունների յրական ղեկավարությունը ձեռք բերի, չի նշանակում ընդունել, լծե միությունները պետք է ձեվակամորեն կուսակցական յինեն: Դասակարգային կովի առաջին քայլերն անող մասսաներին կը յարտնեցնել յեվ կուսակցական կազմակերպությունն անորոշ կը դարձնել: Կոմունիստները միությունների ղեկավարությունը ձգտում են ձեռք բերել նրանց ներսում՝ աշխատելով յեվ կովելով իանուն կոմունիստական սզդեցություն:

Արհմիությունը չափազանց յուրահատուկ գուգակցումն է ամենագիտակից յեվ առաջավոր բանվորների, պրոլետարիատի ավանգարդի յեվ դասակարգային գիտակցության տարբեր աստիճանների վրա գտնվող լայն շերտերի վորոնց լծվում նայել ամենահեռամնաց յապերի: Միությունները կոմունիզմի դպրոցներ են, ուր առաջապան ամենորյա դասակարգային կովի դասերի միջոցով կազմակերպում, կոտմ, գրավում ու դաստիարակում է անկուսակցական մասսաներին յեվ սովորեցնում նրանց՝ կոմունիստներն րմբռնելու բանվորության անելիքները:

Այդ ավանգարդը կուսակցական կոռ կարգապահությունը միությունների մեջ աշխատելով կուսակցության նրաննգներն է անցկացնում: Միայն չպիտի շտապել, այլ համբերությամբ քայլ առ քայլ մասսան քարձրացնել աստիճանից աստիճան, չջղայնանալ յեվ յիմարություններ չանել մասսայի «նեաաղիմականության» պատճառով: Այդ «նեաաղիմականությունն անխուսափելի է, ուստի յեվ անխնայ պիտի կովել նեաաղեմ առաջնորդների, մանր բուր-

ժուսկան ազդեցութիւնների, անարխիստական շեղումների  
դեմ, վերոնք կուսակցութիւնը նսկադրում են դատակար-  
գին յեւ վրոլեատարիատին դեպի բուրժուական բազմա-  
կանութեան ուղին են զրաւում:

## ԳԼՈՒԽ II

### ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈԿ- ՏԵՄԲԵՐԻՑ ՀԵՏՈ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ ՅԵՎ ԼԵՆԻՆԸ

#### ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒ- ԹՅԱՆ ՊԱՇՏՍԱՐԱՆՆ ԵՆ

Բանվորութեան հանձարեզ առաջնորդն իր այս ընդ-  
հանուր հայացքները արձմիութեանները դերի և նրանց  
փոխահարարութեան մասին պրոլետարական ա-  
վանգարդի հետ կարողացաւ հիմք դարձնել ուստական  
արհշարժման նոր խնդիրները և գործելակերպի համար,  
պրոլետարիատի իշխանութեանը զրաւելու հենց հետե-  
յալ սրը: Հատկապէս նրա զազաւարական գեկաւա-  
րութեան առկ կատարեցին մեր արձմիութեաններն իրենց  
պատմական դարձը կապիտալիզմի ժամանակի հին խըն-  
դիրներէց գեպի պրոլետարական գիկաատուրայի պայ-  
մաններէց թելազրված նոր խնդիրները:

Իշխանութեանը զրաւելու հետեյալ սրվանից պրո-  
լետարիատի և նրա կուսակցութեան խնդիրները փոխվե-  
ցին, հիմնական խնդիրն այժմ նոր պետութեան կազմա-  
կերպելու հարցն էր: Ռուսաստանի բանվոր պատակարգի,  
նրա կուսակցութեան առաջ նոր տիպի պետութեան կազ-  
մակերպելու բոլորովին նոր խնդիրը ծաղեց:

Սորհրդային պետութեան առաջին կազմակերպողն ու  
գեկաւարն ավելի լավ գիտեր, քան մի ուրիշը, վեր դա  
մի խոշոր խնդիր է, վեր միայն բուրժուակալիին ջախ-

Չախելով չի լուծվի, վոր դա մի քանի ամիսները կամ մի տարվա գործ չե, այլ յերկար տարիները:

Միությունների II համագումարի իր ճառի մեջ (1919 թ.) Լենինը բերում է Մարքսի՝ խոսքերը թե՛ «վորքան լայն ու խոր լինի հասարակության կյանքում աեղի ունեցող հեղաշրջումը, այնքան բազմաթիվ պիտի լինին այդ հեղաշրջումը կատարող մարդիկ, վորոնք կը լինեն, բառի լսկական մտքով, այդ հեղաշրջման ստեղծողները»:

Կուսակցութիւնը, բանվոր դասակարգը նոր սոցիալիստական պետութեան տիպ ստեղծելու հնարավորութիւնն են միայն կռվով ձեռք բերել: Հեղաշրջումը միայն սկսված է: Կապիտալիզմի ժամանակ ճնշման և ստրկութեան մեջ ապրող հազարավոր և միլիոնավոր մարդիկ պետք է ձգտեն իրականում նոր կյանքը ղեկավարել:

Այդ կարող է կատարվել միայն աշխատավոր լայն մասսաների դաստիարակութեան յերկարատև ու համառ աշխատանքի հետևանքով - վոչ թե դասազրքերով, այլ նրանց նոր սոցիալիստական շինարարութեան փորձով:

Ահա ինչպիսի հսկա խնդիր է կանգնած Ռուսաստանի բանվոր դասակարգի առաջ. այդ նոր խնդիրն ստեղծագործական է, մինչդեռ հինը՝ բուրժուական պետութիւնը քայքայելու խնդիրն էր:

Յեւ յերբ Լենինը գնահատում էր այն ուժերը, վորոնք ի վիճակի յեն այս խնդիրը լուծելու, նա չէր կարող արհմիութիւններն անտեսել. վորոնք ստեղծված էին կապիտալիզմի պայմաններում, վորպէս զի բանվորների տնտեսական վիճակը բարձրելու համար կռիվ մղելին և լայն մասսային դասակարգային կռիվ մղելին և բիւրոկրատիկ կոմմունիստական բմբռնումը սովորեցնելին:

Ըստ Լենինի միութիւնները կապիտալիզմի ժամանակ իրենց պայքարը շատ սերտ պիտի կապեն պրոլետարական կուսակցութեան խնդիրների հետ: Հասկանալի յէ, վոր նոր պայմաններումն էլ պրոլետարական ավան-

անդիի նոր պետութիւնն ստեղծելու խնդիրը պիտի լինի և միութիւնների գլխավոր խնդիրը:

Նրանց (միութիւնների) խնդիրն է, — ասում է Լենինը միութիւնների II համագումարում (1919 թ.) — միլիոնավոր և տասնյակ միլիոնավոր աշխատավորներին պարզ գործունեութիւնից դեպի բարձր տանել, յերբեք չհոգնել նրանց մղել դեպի ամենագիտար խնդիրներ և այդպիսով ավելի ու ավելի լայն մասսաներին դաստիարակել, վոր նրանք կարողանան պետութիւն կառավարել, պրոլետարիատի կռիվի հետ ձուլվել, վորը դիկտատուրան իր ձեռքն և վերցրել և ամբողջ աշխարհի աչքի առաջ այժմ էլ պահում է»:

Այսպիսով միութիւնները պրոլետարական գերիշխանութեան շրջանում մի տեսակ «պահեստարան» (резервар) են պետական իշխանութեան համար, ինչպէս Լենինը միութիւնների մասին գրած իր հոգվածներից մեկում ասում է: Միացնելով համարյա յերկրի ամբողջ բանվոր դասակարգը՝ միութիւնները պիտի իշխանութեան հասած դասակարգի միջից միշտ ավելի շատ նոր պետական աշխատակիցներ առաջ բերեն:

Միութիւնները գառնում են բանվորների համախմբում, վորի նպատակն է՝ շարունակ ու աստիճանաբար բանվորների ձեռքը ձգել ամբողջ յերկրի կառավարելը:

### ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԸ

Լենինը մասնավորապէս մեծ նշանակութիւն էր տալիս միութիւնների արդյունաբերութիւնը կազմակերպելու աշխատանքին Խորհրդային իշխանութեան առաջին տարիներում, յերբ բանվորական կառավարութեան ձեռքն անցած այդ արդյունաբերութիւնը կառավարելու համար նոր ապագատներ պետք է ստեղծվելին: Պետք է բոլորովին նոր կազմակերպութիւն հանդես բերվեր, պրոլետարիատի գործին նվիրված մարդկանց կազմակ-

ին, պետք էր ոգնել այդ կազմակերպությանը, վոր սա յառանձին ֆարրիկաներն ու գործարանները ի մի խմբեր, վոր կաջողանար իր առաջին քայլերն անել այնպիսի մի ստպարիգում, ուր բանվոր դասակարգն անցյալում վոչ մի փորձառություն չուներ:

Հիմա Խորհրդային իշխանության գոյության 5-րդ տարին, մեր անտեսական որդանները մի հսկայական, ճյուղավորված սպարառու են, վոր անցյալ տարիների շինարարական մեծ փորձառություն ունին: Հիմա անտեսարարների, կազմակերպիչների մի վորոշակի շերտ ունինք: Այդ սպարառու սպրում է արդեն իր ինքնուրույն կյանքով, ունի իր աշխատելու վարժությունը, ունակությունը. նա արտադրության անկման տարիներն արդեն անցել է. նա ցույց տվեց, չնայած իր բոլոր թերություններին, վոր կյանքի դասերն ի զուր չեն անցել:

Այսպես է այժմ:

Սակայն Խորհրդային իշխանության առաջին տարին գրությունն այդպես չէր . . . Հենց արհմիությունները, վորոնց կուսակցությունը իրենց Վ համագումարին արտադրության կազմակերպման կարևորագույն խնդիրները մասնանշեց, իրենց, կարելի չէ սեղ, մաստայական նախաձեռնությամբ ստեղծեցին այն հիմնարկները, վորոնք այնուհետև, կովի բնթացրում, սկսեցին տիրապետել մեր արդյունաբերությանը և ղեկավարել այն:

Լենինը բարձր էր գնահատում միությունների, վորպես ժողովրդական անտեսության առաջին կազմակերպիչների, այդ գերը: Նա այդ գործունեյության մեջ բանվոր մասսաների նախաձեռնության և ինքնագործունեյության կորովի արտահայտությունն էր տեսնում. բանվորների կովի պատմության ամենապատասխանատու րոպեներին Լենինը անդադար կոչ էր անում լայն մասսաներին գեպի հենց այդպիսի նախաձեռնություն և ինքնագործունեյություն:

Լենինը նույնպիսի մեծ նշանակություն էր տալիս

միությունների այն կովին, վորի նպատակն է աշխատանքի կարգապահության նոր սկզբունքներ սահմանել:

Պետք է նորից կարգալ Լենինի գիրքը շարաթորյակների մասին: («Մեծ նախաձեռնություն»), հատկանալու համար՝ ինչ մեծ նշանակություն ունեյին նրա համար աշխատանքի կարգապահության գիտակից արտահայտությունները, բանվորների ինքնագործունեյությունը՝ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար: Հենց այդ է գլխավոր յերաշխիքը կոմունիզմի հաղթանակին, գտնում է Լենինը:

Յերբ կապիտալիզմի մարակի փոխարեն բանվորներն իրենք են աշխատանքի կազմակերպության այնպիսի սկզբունքներ սահմանում, վորոնք արտադրողականությունը պիտի բարձրացնեն, այդ արդեն վճռական հաղթանակ է նոր կարգի ստեղծման հիմնական ճակատում: Սոցիալիզմն այն ժամանակ կը հաղթանակի, յերբ նա կապիտալիզմից ավելի բարձր աշխատանքի արտադրողականություն ցուցաբերի:

Աշխատանքի արտադրողականության այս բարձրացման համար քիչ նշանակություն չունի նաև աշխատանքի կարգապահության բարձրացումը: Լենինը այդ պատճառով վողջունում է ՀՄԿԽ և մետադարձների կենտրոնական կոմիտեյին, վորոնք արդեն 1918 թ. առաջին ամիսներին գրեցին մշակման չափի, քաջալերող սխտեմների և ուրիշ «չատ բաների գործադրությունը ինչ վոր Թեյլորի սխտեմի մեջ գիտական և առաջադիմական է»: («Խորհրդային իշխանության հերթական խնդիրները» 1918 թ.):

### ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ—ԿՈՍՈՒՆԻՉՄԻ ԴՊՐՈՑՆԵՐ

Այսպիսով միություններն իրենց ամենուրյա աշխատանքով միշտ նոր ու նոր կազրերին բանվոր դասակարգի խնդիրները կոմունիստական ըմբռնումն են սովորեցնում:

Միությունները կապիտալիզմի ժամանակ կոմունիզմի դպրոցի այդ գերը կատարում էյին առանձին

կապիտալիստի և առհասարակ կապիտալի դեմ ուղղված ամենորոյա կռիւի դասերի միջոցով: Պրոլետարիատի գիւղատատուրայի ժամանակ նրանք այդ դերը կատարում են նրանով, վոր բաց են անում բանվորական լայն մասսաների առաջ սոցիալիստական անտեսութեան նոր խնդիրները, մասնակցում են այդ մասսաների հետ նորը կազմակերպելու կովին, այդ աշխատանքը տանելու համար ցածից առաջ են քաշում միշտ նոր ու նոր բանվոր շերտեր, համոզում են ամենալայն շերտերին, թե անհրաժեշտ է կովել նոր կյանքի կազմակերպման համար:

Միութեանները վորպես հազորդիչ մեխանիզմ կուսակցութեանից դեպի դասակարգ, նոր պայմանների շնորհիվ վոչ թե թուլացել, այլ ընդհակառակը ուժեղացել է: Ահա թե Լենինն իր «Չարութեան մանկական հիվանդութեանը» գրքում ինչպես է բնորոշել այդ դերը մյուս յերկրների կոմունիստների համար.—

«Կուսակցութեանն իր աշխատանքի մեջ է անմիջորեն հենվում արհմիութեանների վրա, վորոնք ըստ վերջին ավյալների (I V 1921 թ.) 4 միլիոնից ավելի ձևականորեն անկուսակցական անդամ ունին: Միութեանների խոշոր մեծամասնութեան՝ գլխավորապես համառուսական կենտրոնի կամ բյուրոյի (Համառուսական Արհմիութեանների կենտրոնական Խորհուրդ BIIOPIC) ղեկավար հիմնարկներն իրապես կոմունիստներից են կազմված և կուսակցութեան հրահանգներն են գործադրում: Ընդհանրապես և ամբողջութեամբ վերցրած՝ ստացվում է ձևականորեն վոչ-կոմունիստական, ճկուն, համեմատաբար լայն, խիստ հզոր պրոլետարական մի սպարառատ, վորի միջոցով կուսակցութեանը սերտ կապվում է դասակարգի յեւ մասնայի հետ, վորի միջոցով կուսակցութեան ղեկավարութեամբ իրագործվում է դասակարգի գերիշխանութեանը: Մենք վոչ թե յերկու տարի, այլ յերկու ամիս էլ չեյինք կարողանա յերկիրը կառավարել, գիկատատուրա իրականացնել, յեթե արհմիութեանների հետ սերտ կապված չըլի-

նեյինք, յեթե նրանք մեզ շերտ ոժանդակութեան ցույց չտային, յեթե նրանք վոչ միայն անտեսական, այլ նաև ուղղմական շինարարութեան մեջ անձնագոր կերպով չաշխատեյին»: Այսպես էր գնահատում Լենինը միութեանները դերը պրոլետարական գիկատատուրայի ընդհանուր սխառեմի մեջ:

Միութեանների այս դերը վորպես հսկայական հազորդիչ մեխանիզմ անմիջորեն կառավարող ավանգարդից դեպի աշխատավորութեան ահագին շերտերը, Լենինի աշքում հիմնական և վճռական նշանակութեան ունեւ: Այս տեսակետից էլ նա գնահատում էր միութեանների մյուս մասնակի խնդիրները: Այս նրա հիմնական տեսակետն էր, յերբ նա ստիպված էր կովել այն սխալ ուղղութեան դեմ, վորով պրոլետարական գիկատատուրայի շրջանում մտանում են միութեանների խնդիրներին:

#### ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ» ՅԵՎ «ՊԵՏԱԿԱՆԱՑՄԱՆ» ԴԵՄ

Միութեանների «չեզոքութեան» թեորիան մեզ մոտ հոկտեմբերից հետո վերափոխվեց միութեանների «անկախութեան» թեորիայի: Նոր պայմաններում պրանք հին յերգեր էյին:

Կապիտալիզմի տիրապետութեան շրջանում արհմիութեանների «չեզոքութեան» իսկապես նշանակում էր՝ «կուշա» էրի կուսակցութեանն ոժանդակում և «բանվոր դասակարգի բուրժուական քաղաքականութեան» քարոզ:

Իսկ պրոլետարական գիկատատուրայի ժամանակ միութեանների «անկախութեանը» պրոլետարական պետական իշխանութեանից կը նշանակի՝ հրաժարվել այդ իշխանութեանն ոգնելուց, մտրանչող պրոլետարիատի ավանգարդին զավաճանել, «կուշա»-երի կողմն անցնել: Լենինը մենշեվիկները հայտարարած այդ «անկախութեանը» վորակում էր վորպես «բուրժուական ծրագիր և դավաճանական խոսք»:

Հասկանալի չէ, վոր այդ թերութայի և նրա ներկայացուցիչներին դեմ մղած կռիվը պիտի վերջանար միությունների այդ ուղղության լիակատար՝ թե՛ գաղափարական և թե՛ կազմակերպչական՝ ՉախՉախուսով:

Լենինը Միությունների 11 Համագումարում ասում է. —

«Փաստերը գարթեցնում են ամենաբուժ և հետամնաց գլուխներին և զիմուրատիայի ու «անկախության» մասին առ հասարակ ճառողները կը չքանան: Այդ մարդկանց մասին կը խոսեն այնպես, ինչպես բրածոների մասին են խոսում»:

Միությունների գերի և կուսակցության հետ ունեցած նրանց փոխհարաբերության լենինյան ըմբռնումը ընտրողու համար վերին աստիճանի կարևոր են Լենինի այն հայացքները, վոր նա արտահայտել է կուսակցության ներսում գոյություն ունեցող այն ուղղության առթիվ, վորը միությունների անհատապես «պետականացման» կողմնակից էր:

Այդ ուղղության կողմնակիցները կարծում էյին, թե պրոլետարական գիկատատւրայի պայմաններում բանվորների անտեսական շահերը պաշտպանելու միությունների անելիքներն ամբողջովին վերացել են, թե այդ պատճառով միությունների անկախ գոյությունը հիմք չունի ներկա պայմաններում: Հետևաբար նրանց պիտի մացնել թորհրդային իշխանության մարմինների ընդհանուր սխտեմի մեջ և նրանց պետական իշխանության վորոշ գործառնություններ հատկացնել:

Լենինը վճռականորեն դուրս է գալիս այդ ուղղության դեմ: Նրա տեսակետից այդ տեսության կողմնակիցները նախ գերագնահատում են նորի կառուցման ընթացքի արագությունը, նրանք սխալ են պատկերացնում աշխատավորների լայն շերտերի գիտակցական մակարդակի բրական զրոությունը:

Նույն այդ 11 համագումարում Լենինն ասում է. —

«Բանվոր դասակարգը յերբեք չինական պատերազմ գառված չի յեղել հին հասարակությունից: Նա դեռ կապիտալիստական հասարակության ավանդական հոգեբանությունից շատ բան է պահել: Բանվորները նոր հասարակարգ են ստեղծում առանց նոր մարդ գառած լինելու. նրանք դեռ չեն մաքրվել հին հասարակության կեղտերից, այլ մինչև ծնկներն այդ ցեխի մեջ են: Ստիպված ենք միայն յերազել, թե ինչպես կարողանանք այդ կեղտերից ազատվել: Մեծ ցնորք է կարծել, թե այդ կարելի չէ սենել անմիջապես: Դա մի ցնորք կը լիներ, վոր գործնականում սոցիալիզմի թագավորությունը յերկինք կը փոխադրեր»:

Ուստի աշխատավորների լայն շերտերի գառախարակության, կրթության խնդիրը, նրան համոզելը, թե անհրաժեշտ է պայքարել սոցիալիստական անտեսության համար, — յերկար տարիների, ամբողջ մի շրջանի գործ է: Այդ խնդիրն անտեսելը «պետականաման» կողմնակիցների արմատական մեղքն է: Նրանց մեծագույն ցնորքն է, թե կարելի չէ մտտաներին միանգամից մաքրել կապիտալիզմի ժառանգությունից: Նրանց արմատական սխալն այն է, յեթե Լենինի բառերով ասենք, վոր նրանք գերագնահատում էյին զարգացման ընթացքի արագությունը, չեյին նկատում աշխատավոր լայն շերտերի ճանրաշարժությունը, ուստի նրանք չեյին կարող նոր կյանքը դեկավարել: Հետագայում մենք կը հանդիպենք այդ գերագնահատությանը կոմկուսակցության մի մասի կողմից արճմիությունների գերի մասին յեղած վիճաբանությունների ժամանակ:

Մյուս կողմից Լենինը խորհրդային շինարարության առաջին տարիներին արդեն տեսնում էր, թե վորքան հեռու է խորհրդային ապագաբառը, նոր պետության սպալարաբառը, այն վիճակից, վորի մեջ նա ըստ իր առաջադրության պետք է լիներ: Այդ ապագաբառի բյուրոկրատանալն առաջ էր յեկել յերկրի քե՛չ քաղաքակրթված լիսնելուց, հսկայական գյուղացիական յերկրի բանվոր դաս-

ոակարգի փոքրաթիվ և անպատրաստ լինելուց: Այդ բյուրոկրատացման վերացումը յերկարամյա համառ աշխատանքի և պայքարի խնդիր է: Արհմիություններն աշխատում խոշոր նշանակութուն կարող են ունենալ:

Միությունների պետականացումն այդ պայմաններում վոչ մի դրական արդյունք չեր առ խորհրդային պետութանը, իսկ դրա փոխարեն կուսակցությունն պրոլետարիատը կը զրկվեյին այն կազմակերպությունից, սւր միլիոնավոր մարդիկ միանում են և կարող են սովորել, վորը միջոցով աշխատավորության միշտ նորանոր գանգվածներ պատրաստվում են յերկրի սոցիալիստակա կազմակերպման կովի համար:

Մենք բավականաչափ բյուրոկրատ որգաններ ունինք, ասում եր Լենինը պետականացման կողմնակիցներին. դուք չեք նկատում արհմիությունների մասսայական ձգտւթը, դուք չեք նկատում, վոր նրանց մեջ բանվորների առաջին շերտեր են կազմակերպված. կանցնեն տարիներ և տասնամյակներ և նրանց միջոցով միլիոնավոր մարդիկ կը գան դասակարգային լիակատար գիտակցության:

Անցման այս շրջանում պրոլետարիատի գիկտատուրան միայն նրա ավանգարդը կարող է իրականացնել, վոր ուղղմական կուս. կազմակերպությամբ միացած է, պրոլետարիատի զարգացման ուղին գիտե և նրան այդ ուղիով ասաջնորդում և գաստիարակում է: Ամբողջ դասակարգը միասին վերցրած, հանձին իր անկուսակցական մասսայական կազմակերպությունների, չի կարող հենց հիմա իրականացնել այդ գիկտատուրան, «վորովհետե վոչ միայն մեր հետաճիաց յերկրում, այլ նաև մյուս բոլոր կապիտալիստական յերկրներում պրոլետարիատը գեռ այնքան պառակտված է, այնքան ստորացած ու վորոշ տեղերում կաշառված (հենց առանձին յերկրների իմպերիալիզմի կողմից), վոր լայն բանվորական կազմակերպությունը պրոլետարիատի գիկտատուրան անմիջապես իրա-

նանացնել չի կարող: Այդ գիկտատուրան իրականացնել կարող է միայն այն ավանգարդը, վորն իր մեջ կուտակել է դասակարգի հեղափոխական յեռանդը»: («Արհմիությունների մասին, ընթացիկ մոմենտի մասին»):

Սոբորդային իշխանության առաջին տարիներին Լենինն այսպես եր սովորեցնում կուսակցությանն ու միություններին՝ բոլորովին նոր պայմաններում գործադրել միությունների և կուսակցության խնդիրների հեղափոխական-մարքսիստական ըմբռնումը:

Պատմական այս մեծ դարձապատույտի ժամանակ Լենինն իր հանձարով ոգնեց Ռուսաստանի բանվոր դասակարգին, վոր նա կանոնավորե իր շարքերը, նպատակահարմար տեղավորե բանվորական գիկտատուրայի ընդհանուր մեխանիզմի մեջ իր առանձին կազմակերպությունները՝ հաշվի առնելով նրանց յուրաքանչյուրի աշխատանքը պայմանավորող իրական հանգամանքները . . .

Մենք հետագայում կը խոսենք այն հարցի մասին, թե ինչպես եր Լենինը «Ռադմական կոմունիզմի» շրջանում հասկանում միությունների խնդիրը իրենց անդամների սնտեստիկան՝ այսինքն անմիջական նյութական շահերը պաշտպանելու ասպարիզում: Այնտեղ ել մենք կը տեսնենք, թե Լենինն ինչպես հաճախ ստիպված եր պնդել, վոր միությունների ձուլման ընթացքը պրոլետարական պետության հետ դանդաղ է առաջ գնում:

Սակայն այժմ մենք արդեն կարող ենք ասել, վոր կյանքը լիովին արգարացրեց Լենինի այն ըմբռնումը, վոր նա ուներ այդ ձուլման ընթացքի մասին պրոլետարիատի գերիշխանության դեռ առաջին տարիներին:

Ավանգարդը դեռ նոր է սկսել աշխատավոր մասսաներին դաստիարակել, նրանց դրավել, վոր պետությունն ու արատգրությունը գեկավարեն: Այդ ուղղությամբ դեռ շատ բան կա անելու մինչև վոր ասել կարողանանք թե աշխատավորների արհմիությունները վերջնականորեն ձուլվել են իրենց պրոլետարական պետության ասպա-

բատի հետ, — այսպես եր ասում էինքնը Միություններ  
II Համագումարում (1919 թ. հունվարին):

### ՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌՎԻ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԼԵՆԻՆԸ

Քաղաքացիական կռվի տարիները նոր պայմաններ  
ստեղծեցին միությունների աշխատանքի համար: Բանվոր  
դասակարգի բոլոր ուժերի գերազույն լարումը պետք է իր  
հիմքը դնեք միությունների գործունեություն վրա: Միութ-  
յունների աշխատանքի այդ շրջանը կարելի չէ բնորո-  
շել վորպես մի շրջան, յերբ միությունների գործունե-  
ությունը մեծապես մտանում էր պետական ատրպա-  
րատի գործունեության: Կուսակցությունը թե խորհրդա-  
յին օրգաններին և թե միություններին միաժամանակ և  
նույն ձևով ամենակարևոր և ամենից հարվածային խըն-  
դիրներն եր առաջադրում:

Ճակատները լարված զբուխունն ստիպում եր հա-  
ճախ կուսակցությանը դիմելու միություններին, վոր-  
պես զի սրանց միջոցով գորակոչի յենթարկե միության  
բանվոր անդամներին Կարմիր բանակի շարքերը լրացնե-  
լու համար: Զորակոչի եյին յենթարկվում վոչ միայն միութ-  
յունների աշխատակիցները, այլև շարքային անդամ-  
ները: Արհեստակցական գորակոչն այդպիսով կատարվում  
եր խորհրդային օրգանների արած գորակոչներից դուրս:

Կուսակցության զխումը միություններին՝ նեղ վար-  
կյաններին օգնություն ստանալու՝ բղխում եր էնիմից:  
Այդպես եր 1919 թ. ապրիլին, յերբ ՀԱՄԿԽ պլենումին  
արած էնիմի գեկուցումից հետո վորոշվեց գորակոչ անել  
Կոչակի Փրոնտի համար: Էնիմն այդ ժամանակ ՀԱՄԿԽ  
պլենումին ներկայացրեց իր թեզիսները միություննե-  
րի անելիքների մասին սաղմական ասպարիզում (այդ  
թեզիսները տպված են Միությունների III համագումար-  
րի ՀԱՄԿԽ հաշվետվության մեջ): Այդ թեզիսներից  
վերջինն ասում ե. — ՀԱՄԿԽ պետք է դիմի բոլոր արհ-

միություններին՝ հեղափոխականի պես գործի անցնելու,  
հին շարունակելով չկաշկանդվելու: ՀԱՄԿԽ կից կազմվեց  
գորակոչի կենտրոնական հանձնաժողով:

Միությունները նույնպիսի վաստապես պետական  
գործ են կատարել հացի համար մղած կռվի մեջ: Գար-  
ձյալ էնիմի նախաձեռնությունը միությունները դեռ  
1918 թ. առաջին պարենավորման գորակոչները կազմա-  
կերպեցին, վորոնք սոված բանվորներին հաց պիտի հայ-  
թայթեյին: 1919-20 թ. ընթացքում միությունների այդ  
գործունեությունը մեծ ծավալ ստացավ: Հանձինս  
Ռազմաարքայությունի (Ռազմական Պարենավորման Բյուրո)  
ստեղծվեց մի ամբողջ կազմակերպություն միություննե-  
րին կից, ըստ վորի հաշվետվության 1918 ՎՄԻ-  
1920 ՎՄՄ միությունները 31.000 անգամ են գո-  
րակոչի յենթարկել պարենավորման ճակատի համար:

Ամենագործոն բանվոր ուժերին սովի դեմ գորա-  
կոչելու հետ միաժամանակ միությունները բացառիկ յեռան-  
դով կոչ եյին անում լայն մասսաներին, վոր գոհաբերող  
լինեն, վոր քաղցն ու ցուրտը համբերություն տանեն և  
աշխատեն, մինչև վոր կարմիր բանակը ճակատներում  
հաղթի:

Հիշելով այդ ծանր հերոսական տարիները, մի չի  
լնդունի ուռուական միությունների համաշխարհային-  
պատմական վաստակը, վոր նրանք կուսակցության դե-  
կավարությունը կարողացան բանվորության ամենահետա-  
մնաց լսավերին անգամ գոհաբերության կոչել:

Էնիմն և սովել այն օրինակը, թե ինչպես պետք է  
կարողանալ, յերբ կարիք կա բանվորներին գոհաբերու-  
թյան կոչել . . .

Ահա մի բնորոշ հատված՝ նրա ճառից (1920 թ. մա-  
նածագործ, համագումարում). — «Հիմա պետք է լարված  
կռվենք սորֆի համար: Տորֆը մեզ պետք է բանվորներին  
հաց հասցնելու համար, գյուղացիներին՝ աղ, մանածա-  
հաց գործարաններին՝ բամբակ կային: Տորֆը մեր փրկությունն

ե: Տարֆը գտնվում է այն գործարանների կողքին, վորոնք հիմա չեն աշխատում: Հիմա չի կարելի ասել մենք մանածագործ ենք և վոչ թե տորֆի կարող: Բանվորների այդ տեսակեալը կը նշանակեր՝ դարձ գեպի հինը: Այդ գործն ունի մեծ դժվարություններ: Գիտեմ շատերն սախաված կը լինեն ջրի մեջ աշխատել առանց համապատասխան հագուստ ունենալու: Սակայն մենք պետք է հիշենք, վոր արյան ճակատում մեր կարմիր բանակայիններն ել առանց կոշիկների յեն, արշավելիս մինչև ծնկները ջրի մեջ, նրանք կարողացան հաղթանակ տանել, ինչպես վերջերս տեղի ունեցավ հարավային ճակատում... Մենք ել պետք է աշխատանքի ճակատում հաղթանակ տանենք: Կորչի հին արհեստակցականությունը»:

Ահա Ռուսաստանի և ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի բազմի համար մարտնչող ավանդարդի զոհաբերության և ոգնության կոչը՝ ուղղված աշխատավորների լայն մասսաներին:

Այս պարզ խոսքերի մեջ ամբողջ ճշմարտությունն է ասված. վոչ մի խոստում, թե դրությունն անմիջապես կը բարվոքվի: Այդպես եր կարողանում կոչ անել բանվոր դասակարգի առաջնորդը, վորը գիտեր՝ յեթե ավանդարդը, յեթե միությունները անհողողող գիմեն վորոշ նպատակի, ամենահետամնաց մասսաներին ել իրենց հետակց կը քաշեն:

Լենինն ամենից լավ եր հասկանում, թե վորքան մեծ է այն զոհաբերությունը, վոր ուսական միություններն ամբողջ բանվոր դասակարգի հետ այդ տարիներին արին, և թե վորքան մեծ է այդ զոհաբերության նշանակությունը:

Լենինն իր ամենապատասխանատու ճառերի մեջ յերկու անգամ (IX Կուսնամագուժարի կենտկոմի հաշվետվության և 1920 թ. ապրիլի Միությունների I I համագումարի վողջույնի ճառի մեջ) Վիճակագրական Վարչության ուղեկցւելից յերկու թիվ է բերում ցույց տալու, վո

1818 և 1919 թվականներին սպասող հաճանգների բանվորն ստացել է տարեկան 7 փութ, իսկ արտադրող հաճանգների գյուղացին սպասել 17 փութ հաց: Պատերազմից առաջ գյուղացին սպասում եր տարեկան 16 փութ:

Յեւ Լենինն ասում եր. — «Մեր անելիքը վերին աստիճանի դժվար է: Մեր միությունները մեծ սգնություն են ցույց տվել պրոլետարական պետության կառուցման գործին: Նրանք այն ողակն են, վոր կապում են կուսակցությունը բաղամիլիոն խավար մասսայի հետ: Տապ-կենսոցի չը խաղանք. — արհմիություններն իրենց ուսերի վրա յեն տարել ամբողջ կոիվը մեր թշվառության դեմ, յերբ կարիք եր լինում ոգնել պետությանը պարենավորման գործում. միթե դա ամենամեծ խնդիրը չեը»:

Յեթե մենք համեմատենք այս ըմբռնումն և քաղաքական կովի տարիներում միություններին տված գործունեյության այս ուղղության հետ մեր մենչեվիկների «խմաստուն» խորհրդածությունները, վորոնց կարծիքով բայլելիկները ուսական միությունները քայքայել և «մահացրել» են, սպա մենք կտեսնենք, թե ինչպիսի մեծ անգունդ կա միությունների խնդիրների Լենինի զարգացրած հեղափոխական-մարքսիստական ըմբռնման և արեղյունիւնների, համաձայնողականների ըմբռնման միջև:

Լենինն ասում եր, վոր յերբ բանվոր դասակարգի բազմն է վարչվում, այդ դասակարգի բոլոր ուժերը, նրա բոլոր կազմակերպությունները պիտի սեղմվեն իրրե մեծ յերկաթե բուռնցք, վորպես զև գասակարգային թշնամուն հաղթեն, ջախջախեն: Մենչիկիկները, արեղյունիւնիստականները նման պայմաններում առաջարկում են գատել միությունները մարտնչող առաջապահից, վորպիհետե միությունները միայն անտեսական քաղաքականություն են վարում և քաղաքականությամբ չեն զբաղվում: Այդ գատումը և գործնականում կը նշանակե դավաճանել բանվորների ամենավճռական, ամենահեղափոխական շերտին: Արդյուն-

քը կը լինի նրա շախշախումը. իսկ այդ շախշախման կը հետեի վոչ միայն կոմունիստական ավանգարդի, այլ առհասարակ ամբողջ բանվորութեան ակտիվ շերտի ֆիզիքական բնաջնջումը:

Պատմութիւնն Ռուսաստանի փորձով ցույց է տվել, թե ինչ արդյունքի յե հասել հեղափոխական-մարքսիստական քաղաքականութիւնը և միութիւնների Լենինյան ղեկավարութիւնը, ինչպես և Ունգարիայի խորհրդային հանրապետութեան փորձով ցույց է տվել, թե մենշևիկների քաղաքականութիւնն ինչ հետևանքերի յե հասցնում: Ունգարիայում մենշևիկների բեֆորմիստների ղեկավարութեամբ անբուրժուականների վերնաշերտի ղավածան յեբերումները մեզին նման պայմաններում հասցրին այդ հանրապետութեան խորտակմանը. և այժմ այնտեղ անասելի դաժան սպիտակ դիկտատուրան և հաստատված . . .

Քաղաքացիական կռիւի շրջանում տեղի ունեցած միութիւնների և պետական ապարատի դորժուներութիւնների մերձեցումը Լենինի համար վոչ մի դեպքում չէր նշանակում, թե միութիւնները իրենց առանձնահատկութիւնը կորցնում են վորպես կազմակերպութիւններ, վորոնք ամենատարրական շահերի հիմքի վրա բանվորական մասսաներին միացնում են, վորպես կազմակերպութիւններ, վորոնց կոչումն է նախ և առաջ լինել կոմունիզմի դպրոց: Այդ դպրոցում ավանգարդը համբերութեամբ, քայլ առ քայլ — նոր բանվորական կենցաղի և սոցիալիստական տնտեսութեան շինարարութեան ամենորշա փորձի վրա — սովորեցնում է մասսաներին, վոր կոմունիստական խնդիրները լայն և խոր ըմբռնեն:

Այդ խնդիրները ժամանակավորապես հետաձգված ելին, վորովհետև գերագույն ճիգ պիտի դորձադրվեր՝ դեռ ամենապարզ խնդիրները լուծելու (քաղաքին վառելիքայտ հասցնել, հաղորդակցութեան ճանապարհները մաքրել, հոց հավաքել և տեղ հասցնել):

Այն ինչ քաղաքացիական կռիւ տարիների փորձը,

յերը շատ խոշոր եր մերձեցումը միութիւնների և պետութեան միջև, կոմունիստական կուսակցութեան մի մասի մեջ սխալ պատկերացում առաջացրեց միութիւնների դարգացման հեռանկարների մասին:

Այդ փորձը կարծես ասում էր, թե միութիւնները յերը նրանք պետական որգաններից անելիքներն ստանձնում են և լուծում, քիչ կամ վոչ բավականաչափ են մոտենում պետական ապարատին, նրանք շարունակում են մնալ ինքնամիտի կազմակերպութիւններ: Ուստի կուսակցութեան այն մասը, վոր ինքնիայով «ոսգմական կոմունիզմի» շրջանն են շարունակում, առաջ քաշեց միութիւնների այնպիսի կազմակերպութեան լոզունգ, վոր կը նպաստեր մոտիկ շրջանում միութիւնների դարգացմանը և նրանց վերջնական ձուլմանը պետական իշխանութեան որգանների հետ: Այդ լոզունգով պահանջում ելին միութեան ղեկավար որգանների և տնտեսական որգանների անձնական կազմի միացում այն հեռանկարով, թե մոտիկ ապագայում նրանք կը ձուլվեն: Այսպիսով կուսակցութեան այդ մասը ցանկանում էր «ոսգմական կոմունիզմի» շրջանի փորձն արհմիութիւնների նկատմամբ շարունակել, մի փորձ, վորը բացառապես բողխել էր բանվոր դասակարգի ուժերի չափազանց լարելու անհրաժեշտութիւնից. հնայած այն ժամանակ, յերը այդ ուղղութիւնը ձեւակերպվում էր, քաղաքացիական կռիւը բոլոր վճռական ձեւակերպում իր հաղթական ավարտին եր հասնում կարմիր բանակի շնորհիվ:

Մյուս կողմից՝ քաղաքացիական պատերազմի վերջում հանդես յեկած բանվոր մասսաների սոսկալի հոգնածութիւնը, քաղաքներում իշխող սովը տատանումներ առաջացրին այդ մասսաների մեջ: Այդ տարերային դժգոհութեան արտացոլումն յեղավ կուսակցութեան մեջ մի այլ թերում՝ այսպիսի կոչված «բանվորական ուղղակի-այլ թերում» շեղումը: Այս մյուս շեղման հաջողութիւնը վոչ այնքան արհմիութիւնների, նրա պատճառով բովանդա-

կուլթյամբ ե բացատրվում, վորքան նրանով, վոր նա քրն-  
նադատում եր խորհրդային ապագարատի բացասական  
կողմերը, նրա բյուրոկրատացումը, վոր հետեանք եր ուս-  
մական շրջանի, յերբ անխուսափելի կերպով վարչական  
զինվորական յեղանակները պիտի գերակշիւ լինեյին բան-  
վորական գեմոկրատայի համեմատությամբ: Եյապես  
«բանվորական սոցիոլիցիայի» պլատֆորմը միությունների  
հարցում, ինչպես կը տեսնենք, կոմկուսակցության և  
Լենինիզմի վագուն խորթ լուծում եր սալիս կուսակցու-  
թյան, միությունների, կուսակցության և գասակարգի  
փոխարարերության հարցերին, այսինքն այն հիմնական  
հարցերին, վորոնք Լենինի արհմիությունների ուսմունքի  
անկյունաքարն են հանդիսանում:

Մի կողմից ուղղմական կոմունիզմի շրջանի ինե-  
րյիան պատճառ եր գաւնում, վոր գերադնահատում եյին  
միությունների և պետապարատի ձուլման: Ընթացքի ա-  
բաղությունը, մյուս կողմից հոգնածությունն ու սովը  
մասսաների մեջ մանր-բուրժուական յերերումներ եյին  
սուղացնում, վորն անդրադարձել ե կուսակցության մի  
մասի սինդիկատիստական հակումների մեջ. այդ բոլորը  
կուսակցության մեջ մտքերի մի խառնաշփոթություն եր  
հանդես բերել արհմիությունների գերի հարցի նկատ-  
մամբ: Այդ խառնաշփոթությունը նորից ստիպեց կու-  
սակցության անգուղական առաջնորդին, վոր նա պրոլե-  
տարիատի գերխլխանության շրջանում արհմիությունների  
հարցի մասին ունեցած իր մտքերը ձևակերպե:

## ԳԼՈՒԽ 10

### ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԲԱՆԱՎԵՃԸ

#### ԻՆՉ ԵՐ ԻՐԱՊԵՍ ԱՐՏԱՅՈՒՈՒՄ ԲԱՆԱՎԵՃԸ

Արհմիությունների մասին բանավեճ ծագեց, ինչպես  
բոլորին հայտնի յե, 1920 թ. վերջին - 1921 թ. սկզբին:

Այստեղ յերեք գլխավոր հոտանք կար. — 1) Լենինի  
զլխավորությամբ. Լենինի հիմնական հայացքները բանա-  
վեճի ժայռանակ մենք շուտով կը բերենք: Լենինի գիրքը,  
ինչպես հայտնի յե, X կուսնամագումարի կողմից հաս-  
տատվում ե (1921): 2) Տրոցկու գլխավորությամբ. այս  
հոտանքի յեղակեան այն եր, թե միությունները ճգնաժա-  
մի մեջ են, վորովհետև նրանք անաեսական աշխատան-  
քից շատ են կարվել: Այս ուղղության պլատֆորմը մի-  
ությունների արտագրական խնդիրներն եր առաջ մղում.  
Նա հանձնարարում եր միությունների առանձին խնդիրներին  
մոտենալ այն տեսակետով, վոր միություններն ու արն-  
տեսական որդանները քանի գնում միաձուլվում են Ըստ  
այդ պլատֆորմի առաջիկա շրջանի զարգացման խնդիրն է  
իրապես կենտրոնացնել անտեսության վարչությունը այն  
միությունների ձեռքը, վորոնք անտեսական որդանների  
միությունների ձեռքը, վորոնք «բանվորական սոցիոլիցիա»-յի խըմ-  
հեա ձուլված են: 3) «Բանվորական սոցիոլիցիա»-յի խըմ-  
բակը Շլյապինիզմի գլխավորությամբ. — այս խմբակի պը-  
լատֆորմն առաջ եր քաշում այն լողունը թե՛ ամբողջ  
արդյունարերության վարչությունն անհատապա պետք ե  
միությունների ձեռքը հանձնել կամ «ժողովրդական սըն-

տեսութեան վարչութիւնը արտադրողներէ համառուսական համագումարին» տալ, ինչպէս ասված է այդ խմբակի կեանքից մեկում:

Սրանք ելին հիմնական հոսանքները բանավեճի ժամանակ:

Այժմ կուսակցութեան մեջ տարածայնութիւնն չկա այն հարցի մասին, ինչ վոր եյապէս արտայայտուի եր արհմիութիւններէ բանավեճը: Բոլորն ընդունում են, վոր նրանից հետո յերկրում մի այլ բան եր կատարվում, վոր միութեան անելիքների հարցի հետ շատ քիչ կապ ունեն: Քաղաքացիական պատերազմը վերջացել եր: Կալվածատէրերից խլած հողի և կապիտալիստներից խլած գործարանների պաշտպանութեան անհրաժեշտութիւնը չեր այլևս բանվոր դասակարգի և գյուղացիութեան միութեան հիմքը, վորովհետև կալվածատերերի և կապիտալիստների գրոհը հաղթականորեն հետ եր մղված: Այդ միութեան համար նոր հիմք եր պետք: Գյուղացիութիւնը հոգնել եր իր կատարած գոհաբերութիւններից և տարերայնորեն պահանջում եր թեթեացնել այն բեռը, վոր նրա վրա յեր գրված քաղաքացիական կռիւ ժամանակ. նա պահանջում եր, վոր պարենբաշխումը փոխարինվի պարենհարկով:

Նա տարերայնորեն նոր անտեսական քաղաքականութիւն եր պահանջում: Գյուղացիութեան տրամադրութիւններն անդրադառնում եյին բանվորական մասսաների վրա նախ այն պատճառով, վոր նրանք գյուղացիութեան հետ կապված են, սպա և այն պատճառով, վոր նրանք ել բավականաչափ հոգնել եյին քաղաքացիական կռիւ տարիների աներկակայելի լարումից:

Այսպիսով կուսակցութեան առաջ նորից դրվեց մեր հեղափոխութեան գլխավոր հարցը՝ բանվորութեան և գյուղացիութեան միութեան հիմքի հարցը:

Յերկրում հենց այդ հարցերն եյին հատուկացել: Այն անորոշ գիտակցութիւնը, թե այդ հարցերը պետք ե լուծել, հուզում եր կուսակցութեան լայն շարքերը: Հիմ-

նական հարցերի վերաբնեւելու այդ պահանջն իր անսպասելի յեղքը գտավ արհմիութեան մասին ծագած բանավեճի մեջ, թեև այդ հարցը չեր, վոր որակարգի նյութ պիտի լիներ:

Յեվ ահա Լենինի քաղաքական հոտատութիւնը պետք եր ունենալ, վոր արհմիութեան մասին ծագած բանավեճից առաջ հարցը դրվեր սկզբից և եթ յերկրի քաղաքական մոմենտի վերլուծութեան իրական հողի վրա:

Միութիւններն, ասում եր Լենինը, կուսակցութիւնն ու բանվոր դասակարգը կապող ողակն են: Կարելի չե առանց ընթացիկ մոմենտը վերլուծելու հարց հարուցանել միութիւնների «ճգնաժամի» մասին, ինչպէս անում են Տրոցկին և «բանվորական ուղիներից»: Յեթե միութիւնները «ճգնաժամի» մեջ են, կարո՞ղ է այդ ճգնաժամը լինել ինքնամիտի, առանձնացած կուսակցութեան և խորհրդային իշխանութեան դրութեանից:

Ուստի, ասում է Լենինն 1920 թ. դեկտ. 30-ին իր նշանավոր ճառի մեջ, արհմիութիւնների «ճգնաժամի», հատկապէս արհմիութիւնների հարցը գնել սկզբունքորեն սխալ է և «գաղափարական շփոթութիւն»:

«Յեթե վերլուծենք ընթացիկ քաղաքական մոմենտը, ասում եր Լենինն իր այդ ճառում, կարող ենք ասել, վոր մենք ապրում ենք մի անցման շրջան անցման շրջանում: Ամբողջ պրոլետարական դիկտատուրան մի անցման շրջան է: Բայց մենք ունենք, այսպէս ասած, անցման շրջանների մի ամբողջ շարք. — բանակի գորացրումը, պատերազմի վերջը, խաղաղութեան ավելի յերկար դադարի հնարավորութիւնը, քան առաջ, ավելի հաստատուն անցումն սագմական ճակատից դեպի աշխատանքի ճակատ: Դրանից միմիայն դրանից արդեն պրոլետար դասակարգի հարաբերութիւնը դեպի գյուղացիութիւնը փոխվում է. ինչպէս է փոխվում: Այդ պետք է ուշադիր գնեն. իսկ ձեր թեզիսներից այդ չի բղխում: Իսկ բանի մենք չենք գնեն յայդ, պետք է կարողանանք սպասել»:

Անա ինչ հարցերով եր գրողված այդ ժամանակ մեր հանճարեղ առաջնորդի ուղեղը: Միությունները գերի պարզ ըմբռնումը, վորպես պրոլետարիատի զիկտատուրայի մեխանիզմի սոսկ մի մասի, հնարավորություն տվեց Լենինին միանգամից ցույց տալու միությունների «ճգնաժամի», մասնավորապես միությունների հարցադրության սխալը և կուսակցության առաջ հարցն ըստ եյության բանաձևելու, իբրև բանվորության և գյուղացիության փոխհարաբերության հարց:

### ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՃՄԱՆ ԹԱՓԻ ՀԱՊՃԵՊ ԳԵՐԱԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Միությունների գերի ըստ եյության վեճի ժամանակ Լենինի համար հիմնականը քաղաքական հարցն էր, միությունները՝ վորպես կոմունիզմի գպրոցների՝ առանձնահատուկ գերի հարցը, միությունների մեջ համախմբված մասսաներին տակաով մոտենալ կարողանալու հարցը՝ առանց իրականությունն անհամբերությամբ մեծացնելու, առանց մասսաների իրական դրության, նրանց զիտակցության մակարդակի և այլն ուսույթական գերազնահատելության:

Մենք սրգեն տեսանք, վոր Լենինը «միությունների պետականացման» կողմնակիցների հետ վիճելիս (միութ. 11 համագում. 1919 թ. սկզբին) նրանց արժատական սրխալը համարում էր այն, վոր նրանք նորի աճման թափը չափազանցում էին: Նա մեծ ուսույթիս էր համարում այն կարծիքը, թե բանվոր դասակարգին միանգամից կարելի է մաքրել կապիտալիզմից ժառանգած կեղտից:

Նոր բանավեճի և նոր պլատֆորմների մեջն էլ Լենինը նախ և առաջ այդ սխալն էր տեսնում: Կուսակցության առաջ նա նորից բանաձևեց իր հայացքները միությունների գերի մասին պրոլետարական զիկտատուրայի անցման շրջանում: 1920 թ. գեկտ. իր ճառի մեջ նա տաում էր. «Արհմիություններն արդյունազորական ամ-

բողջ բանվորությունը կազմակերպության մեջն առնելով՝ դառնում են արբող, կառավարող դասակարգի կազմակերպություն, վորը պետության հարկազրանքն է իրագործում: Սակայն դա հարկազրանքի կազմակերպություն չէ, այլ դաստիարակելու, գրավելու և ուսուցանելու մի կազմակերպություն. դա մի գպրոց է՝ կառավարման, անտեսման, կոմունիզմի: Դա բոլորովին արտասովոր ակտի մի գպրոց է, վորովհետև այդանդ յուրահատուկ ձևով միախառնված է կապիտալիզմի թողած ժառանգությունն այն բանի հետ, ինչ վոր առաջ ևն քաշում հեղափոխական տաշալվոր բանվորները, այսպես առած, պրոլետարիատի հեղափոխական ավանգարդը:

